

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇՉԵԻ



ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ
ԱՆՅԻՑՆ ԱՆՅԵԼՈՑ Ի ՄԷՉ
ՇԱՀ ՆԱԴԻՐԱՅ ԵՒ ԱԻԱԳ ՈՐԴԻՈՅ
ՆՈՐԻՆ ՌԶԱ-ՂՈՒԼԻ ՄԻՐԶՈՒՆ
ՏՐՏՄԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՑ

ԵՐԵՎԱՆ 2009

ИЗВѢСТІЕ

произшедшихъ

между

ШАХОМЪ НАДЫРОМЪ

и

старшимъ его сыномъ

РЕЗА-КУЛЫ-МИРЗОЮ ,

печальныхъ приключеніяхъ

въ Персіи 1741 и 1742 годовъ ,

нынѣ сообщенное

сочиненіемъ

канцеляріи Совѣтника

ВАСИЛЬЯ БРАТИЩЕВА.



ВЪ САНКТПЕТЕРБУРГѢ

при Императорской Академіи Наукъ

1763 года.

9(55)
F-90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇԶԵԻ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՄԷՋ

ՇԱՀ ՆԱԴԻՐԱՅ ԵՒ ԱՒԱԳ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ

ՌԶԱ-ՂՈՒԼԻ ՄԻՐԶԻՆ

ՏՐՏՄԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՑ

Ի ՅԵՐԿԻՆ ՊԱՐՄԻՑ

ՅԱՄՍ 1741 ԵՒ 1742

65/14

Աշխատասիրությամբ
ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆԻ

ՀՀ ԳԱԱ Կրեմլագիտության ինստիտուտի
գրադարանին:

Ա. Մադաթյան

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2009

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու
Ք. Կոստիկյան

Բրատիչչեկ Վ.

Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ
աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց
(աշխատասիրութեամբ Արտակ Մաղալյանի).— Եր.:
«Գիտութիւն» հրատ., 2009, 70 էջ + 16 էջ նկ.:

Բ 904

Գրքում ներկայացված է XVIII դարի ռուս պատմագիր Վասիլի
Բրատիչչեկի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ
եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց»
աշխատության հայերեն թարգմանությունը, որը հրատարակվում է
ըստ Մատենադարանի N 9648 ձեռագրի: Վ. Բրատիչչեկի աշխատու-
թյունը ուղագրով աղբյուր է Նադիր շահի կյանքի և գործունեու-
թյան հետ կապված մի շարք հարցերի լուսաբանման համար:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների և
ընթերցող լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-0783-3
© Մաղալյան Ա. Վ., 2009

ԱՌԱՋԱԲԱՆ

Ռուս պատմագիր Վասիլի Բրատիչչեկի «Բացատրութիւն
անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին
Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատութիւնը
հրատարակվել է 1763 թ., Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստա-
նի Կայսերական ակադեմիայի կողմից¹: Այդ աշխատության
հայերեն թարգմանությունը, որը կատարել է Հարություն
Դավթյան Ջուղայեցին 1778 թ., պահվում է Երևանի Մաշտոցի
անվան Մատենադարանում, 9648 թվահամարի տակ²: Այդ ձե-
ռագիրը XVIII դարի վերջին նրա կողմից կազմված պատմական
նյութերի մի մեծարժեք ժողովածու է, որի բովանդակությունը
հետևյալն է.

ա) Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն
(3ա-24ա)³,

բ) Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին սկսեալ Շահ
Սուլթան Հոսէյնիցն մինչև Քէրիմ խան («Թարգմանեցեալ ի
Յօլանդիզի կազէթից») (25ա-47ա),

գ) Վասիլի Բրատիչչեկ, Բացատրութիւն անցիցն անցելոց
ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միր-
զին տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ
1742, իսկ այժմ յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս հայոց
Յարութիւն Դաւթենիւ Ջուղայեցւոյ (48ա-64ա),

¹ Братищев В., Известие о произошедших между шахом Надыром и старшим его сыном Реза-Кулы-Мирзою печальных приключениях в Персии 1741 и 1742 гг., СПб., 1763.

² Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այս-
պես. «ԺԸ դ. (1778-ից հետո): Թերթ՝ 79: Թուղք: 33,5 x 21,1: Միասյուն: Նոտր-
գիր: Տող՝ 32-36: Կազմ՝ կաշեպատ ստվարաթուղք: Հիշատակարան նախագա-
ղափար՝ 3ա (1723 թ.), 48ա (1763 թ.), 65ա (1782 թ.)» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց
Մաշտոցի անվան Մատենադարանի, Կ. Բ., Ե., 1970, էջ 967):

³ Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն, «Կռունկ Հայոց աշ-
խարհին», 1863, թիւ Բ, էջ 81-112, թիւ Գ, էջ 181-212 (հրատարակումը
կատարված է այս ձեռագրից):

դ) Դեյլօրիեր, Առարկուլթիւն առ իւրոյ պապական սրբութեանն Պիոսի Վեցերորդի (65ա-78ա),

ե) Կարգադրուլթիւն Ավստրիու Յովսէփոյ կայսեր («Թիւն 1785, նոյեմբերի 27-էն Ավստրիու համար 100 կազէթն տպեցեալ է») (78բ-79բ):

Նույն թարգմանութեան մեկ այլ արտագրուլթիւն՝ կատարված Թիֆլիսեցի Ստեփան դի Մանդենովի կողմից 1803 թ., պահպանում է Մատենադարանում, 10889 թվահամարի տակ⁴: Դատելով ձեռագրի հիշատակարաններից՝ վերջինս մատյանի ընդօրինակումը սկսել է 1803 թ. հունվարի 22-ին, և ավարտին հասցրել նույն թվականի փետրվարի 24-ին:

Վ. Բրատիչչեի աշխատութեան հայերեն թարգմանութիւնը, որը Հարուլթիւն Դավթյան Զուղայեցին իրականացրել է ռուսերեն հրատարակութիւնից ընդամենը տասնհինգ տարի անց, պայմանավորված էր Նադիր շահի (1736-1747) կյանքի և գործունեութեան նկատմամբ եղած մեծ հետաքրքրութեամբ: Պատահական չէ, որ ճիշտ նույն ժամանակաշրջանում մեկ այլ հայորդի՝ Պողոս Միրզայան Ամիթեցին հեռավոր Կալկաթայում ձեռնարկել և, «առանց ոչինչ վարձու, և ոչ ումեքէ ակնկալութեան», իրականացրել է անգլիացի ճանապարհորդ Ջոնս Հանվեյի հայտնի աշխատութեան⁵ Նադիր շահին նվիրված մասի հայերեն թարգմանութիւնը, որը 1780-1783 թթ. լույս է տեսել Մադրասում, Հակոբ Շահամիրյանի տպարանում, ընդամենը 200 օրինակ տպաքանակով⁶:

⁴ Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այսպես. «1803 թ.: Թիֆլիս: Գրիչ՝ Ստեփան դի Մանդենով: Թերթ՝ 26: Թուղթ՝ 21,8 x 17,3: Միասին: Նոտրգիր: Տող՝ 19-23: Պահպանակ՝ 2+2, սպիտակ թուղթ: Կազմ՝ մոմլաթապատ ստուարաթուղթ, աստառ՝ թուղթ: Յիշատակարան՝ 1ա, 26ա» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Ե., 2007, էջ 244):

⁵ Jonas Hanway, An historical account of the British trade over the Caspian sea, vol. I-II, London, 1754.

⁶ Հանուէ, Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադիր շահ թագաւորին Պարսից, թարգմանեալ յանգլիացոց բարբառոյ ի հայ բարբառ ի Միրզայեան Պողոս Ամիթեցոյ, Մադրաս, 1780:

Սակայն, ի տարբերութիւն Հանվեյի գրքի՝ Պողոս Միրզայանի թարգմանութեան, Հարուլթիւն Դավթյան Զուղայեցու թարգմանութիւնը տակավին մնացել էր անտիպ:

Մատենադարանում պահպանում են Հարուլթիւն Դավթյան Զուղայեցու ընդօրինակած մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարանների շնորհիվ հնարավոր է դառնում լույս սփռել նրա կենսագրութեան որոշ էջերի վրա: Այսպես, նա 1767 թ. Աստրախանում ընդօրինակել է Գրիգոր Կանպանյանի «Երգարանը», որի վերջում տեղ գտած հիշատակարանում կարդում ենք. «Օրինակեցաւ յամի Տեառն 1767 փետրվարի 9, ի նաւահանգիստն Աստրախան, ձեռամբ մեղապարտ Յարուլթիւն Դավթենէ»⁷:

Մեկ տարի անց՝ 1768 թ. դեկտեմբերին, նա Աստրախանում ավարտել է Միքայել Ասորու «Ժամանակաց զրոյցք» («Ժամանակագրութիւն») աշխատութեան ընդօրինակումը, որի ձեռագիրը գրանցված է Մատենադարանում 3517 թվահամարի տակ: Այդ մատյանի վերջում նրա թողած հիշատակարանում կարդում ենք. «Խնդրեմ Աստուածասէր հարցդ և եղբարցդ, ո՛վ որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսձիք առ յոյսն բնաւից Քրիստոս զնուստ Յարուլթիւնս Զուղայեցի, զհայրն իմ Դաւիթն և զմայրն իմ Սօլթանաղէն, որք հանգուցեալք են ի Տէր: Եւ մանաւանդ զնորաբողբոջ որդիքն մեր՝ զԴաւիթն և զՄարգարայն, որք ծառայք ձեր են ամենեցւոյն, թիրևս աղօթիւք ձերովք զարգացին ուղիղ հաւատով, երկիւղիւ և աստուածաշատութեամբ ի փառս անուան իւրոյ. ամէն... Եղև աւարտումն ի թուին ՌէճԿԸ (1768) դեկտեմբեր Ի (20). ի Աստրախան քաղաքի»⁸: Այս հիշատակարաններից պարզ է դառնում, որ Հարուլթիւն Դավթյան Զուղայեցին 1760-ական թթ. վերջերին ապրել է Աստրախանում, որտեղ էլ, ամենայն հավանականութեամբ, սովորել է ռուսերեն:

⁷ Մատենադարան, ձեռ. N 9840, էջ 36ա:

⁸ Մատենադարան, ձեռ. N 3517, էջ 224ա:

Այնուհետև Հարություն Դավթյանն ընդօրինակել է մի ժողովածու (Մատենադարան, ձեռ. N 8003), որն ընդգրկում է Կեղծ-Կալիսթենեսին վերագրվող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» աշխատությունը և Պետրոս Բերթումյանի «Աստուածանմանութիւն» երկը: Թեև սույն ժողովածուն անթվակիր է, սակայն ակնհայտ է, որ ձեռագիրն ընդօրինակված է 1769-ից հետո, քանի որ Պ. Բերթումյանն իր աշխատության շարադրումն ավարտել է այդ թվականին: Աղեքսանդրի վարքի վերջում Հ. Դավթյանը թողել է մի համառոտ հիշատակարան, որը թեև կենսագրական որևէ տեղեկություն չի պարունակում, սակայն խոսում է այս բաղամարդյուն գրչի պատրաստվածության մասին. «Իսկ զայս Պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու, զոր գրեց իմով անարժան Յարութիւն Դաւթեանի ձեռամբս՝ սրբագրեալ, առընթեր ունելով երկու օրինակս: Բայց ի տեղիս տեղիս բառ և բան անհամեմատք էին, որ և որչափն կարի մեր նուաստագոյն ուղղելով գրեցի և ոմանք բառք ու բանք, զորս վասն այլայլութեան գրողացն չհասկացայ, այնպէս գրեցեցի՝ ստուգապէս ընդ համեմատ օրինակացն և ոչ աւելի կամ պակաս՝ սակս օգտի ինձ նուաստիս և այլ համբակաց, որք կամին օգտիլ ի Աղեքսանդրէ»⁹: Հարություն Դավթյան Ձուղայեցու ընդօրինակած ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ դործ ունենք իր ժամանակի առավել բանիմաց և գրագետ անձնավորություններից մեկի հետ: Թերևս Մեծն Աղեքսանդրի պատմության ընդօրինակումն է նրան հուշել «երկրորդ Աղեքսանդր» հորջորջված Նադիր շահին նվիրված Վ. Բրատիչչևի աշխատության թարգմանության գաղափարը:

Հետագայում Հարություն Դավթյան Ձուղայեցին ևս մեկ անգամ անդրադարձել է Աղեքսանդր Մակեդոնացու թեմային՝ ուսանողներից հայերեն թարգմանելով I դարի հռոմեացի պատմիչ

⁹ Մատենադարան, ձեռ. N 8003, էջ 176ա, հրատ. տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, աշխ. Դ. Սիմոնյանի, Ե., 1989, էջ 47:

Քլինտոս Կուրտիոս Ռուփոսի «Գիրք պատմութեանց Մեծին Աղեքսանդրի» աշխատությունը, որի ձեռագիրը ևս պահվում է Մատենադարանում, 2870 թվահամարի տակ: Այս ձեռագրի հիշատակարանը հաղորդում է նաև նրա ազգանունը. «Թարգմանեցեալ ի լաթինականէ ի ռուստաց լեզու: Հատոր առաջին: Իսկ այժմ արտահանեցեալ անտի ի բարբառս հայոց Յարութիւնի Դաւթեան Դիլանեանց Ձուղայեցւոյ»¹⁰: Ձեռագրում առկա Մակեդոնացու նկարի շրջանակի ներքևի մասում գրված է. «Մեծն Աղեքսանդր Մակեդոնացի. ի Սանկթ Պետրբուրղ փորագրեալ: Ի 1793 յամի Տեառն. ՌՄՆԲ», հետևաբար՝ երկի թարգմանությունը կատարվել է 1790-ական թթ. կեսերին:

Կուրտիոս Ռուփոսի և Վ. Բրատիչչևի երկերի թարգմանությունից բացի նա 1798 թ. Աստրախանում ուսանողներից հայերեն է թարգմանել Ֆեոդոր Էմինի «Գիրք խոստովանական անուանեալ ճանապարհ փրկութեան» աշխատությունը, որը ձեռագիր վիճակով պահվում է Մատենադարանում, 7504 համարի տակ: Թարգմանությունը կատարված է Ֆ. Էմինի գրքի առաջին հրատարակությունից¹¹ տասնութ տարի անց: Այս ձեռագրի հիշատակարանը հաղորդում է. «Այժմ թարգմանեալ Յարութիւն Դաւթեան Դելանեան Ձուղայեցւոյ. յամի Տեառն 1798. ի Աստրախան»¹²:

Նա 1806 թ. Աստրախանում ընդօրինակել է Դյուլորիեի՝ իր իսկ թարգմանած և N 9648 ժողովածուից մեզ նախածանոթ «Առարկութիւն առ պապն Պիոս» երկը, որի ձեռագիրը գրանցված է Մատենադարանում 23 թվահամարի տակ: Այդ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Այժմ թարգմանեալ ի բարբառս հայոց նուաստ և արիկար Յարութիւնէ Դաւթեան Ձուղայեցւոյ Դելանեան, ի Աստրախան քաղաքի, 1806 ամի»¹³:

¹⁰ Մատենադարան, ձեռ. N 2870, էջ 1ա:

¹¹ Эмин Ф., Путь ко спасению или разные набожные размышления, СПб., 1780.

¹² Մատենադարան, ձեռ. N 7504, էջ 1ա:

¹³ Մատենադարան, ձեռ. N 23, էջ 1ա:

Այսպիսով, Մատենադարանի N 3517 ձեռագրի հիշատակարանում առկա գրչի որդու Դավիթ անունը և նրա «Դելէասնան» ազգանունը որևէ կասկած չեն թողնում, որ Վ. Բրատիչչևի աշխատության թարգմանիչ և բազմաթիվ գրիչ Հարություն Դավթյան Դելանյան Զուղայեցին ոչ այլ ոք է, եթե ոչ ռուսական բանակի գեներալ-մայոր, 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս Դավիթ Դելյանովի (Դելանյան, 1761-1830) հայրը: Հ. Դելանյանը 1795-ից հայերեն է դասավանդել Աստրախանի ժողովրդական գլխավոր ուսումնարանում¹⁴, իսկ հետագայում Աստրախանից տեղափոխվել է Պետերբուրգ, որտեղ ստացել է ազնվականի կոչում¹⁵:

Արժանին պետք է մատուցել Հարություն Դավթյան Դելանյան Զուղայեցուն սույն աշխատության բարձրարժեք թարգմանության համար: Ռուսերեն բնագրի հետ նրա թարգմանության համեմատությունը ցույց տվեց, որ այն կատարված է ճշգրիտ ու բարձր մակարդակով: Այն Հանվեյի երկի՝ Նադիր շահին նվիրված մասի հայերեն թարգմանության հետ մեկտեղ անվարան կարելի է դասել XVIII դարի հայ թարգմանական գրականության լավագույն հուշարձանների շարքը:

* * *

Իրանի Նադիր շահի կենսագրությունը դեռևս նրա կենդանության օրոք վիպական կերպարանք էր ստացել: Եվրոպական լեզուներով գրվում և հրատարակվում էին նրա համառոտ և ընդարձակ կենսագրականները, որոնցում ներկայացվում էր թուրքմենական աֆշար ցեղից սերված այս շարքային ռազմիկի սրընթաց վերելքը դեպի Սեֆյանների գահը:

¹⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հ. 1, խմբագիր՝ Վ. Միքայելյան, Ե., 2003, էջ 277:

¹⁵ Нерсисян М., Отечественная война 1812 г. и народы Кавказа, Е., 1965, с. 222, Аветисян Г., Генералы-армяне в Российской империи, Е., 2007, с. 169.

Այս թաղիքագործի որդին, որն իր ընտանիքի ապրուստը վաստակում էր վառելիքայտի վաճառքով, իր հայրենի խորասանում գլխավորել էր ապստամբությունը աֆղանական տիրապետության դեմ: 1726 թ. ծառայության էր անցել շահ Թահմասպ II-ի (1722-1732) մոտ, իսկ 1730-1731 թթ. հաղթել էր Իրանի մի շարք շրջանները զավթած աֆղաններին ու թուրքերին: Այդ հաղթանակները մեծ ժողովրդականություն են բերում Նադիրին: «Շահ Թահմասպ II-ի պարտությունները թուրքական զորքերից և նրա դեմ ծագած դժգոհությունները հարմար առիթ են ընձեռում Նադիր խանին նրան գահընկեց անելու համար, որից հետո Նադիրը գահ է բարձրացնում Թահմասպի Ց-ամսյա որդուն՝ Աբբաս III-ին (1732-1736)՝ վերջինիս առնելով իր խնամակալության տակ: Սակայն, խնամակալի դերը ևս չի գոհացնում Նադիրին և նա ինքն է գահ բարձրանում 1736 թ. մարտի 8-ին»¹⁶: Այսպիսի կյանքի ճանապարհ անցած Նադիրը փնտրված կերպար էր հերոսական պատմությունների սիրահար Եվրոպայի համար:

Նադիր շահի եվրոպական վարքագրություններում շատ հաճախ էին միախառնվում իրականն ու առասպելականը: Այդ կապակցությամբ հայ նշանավոր պատմաբան Լեոն նկատում է. «Եվրոպայում տեսակ-տեսակ պատմություններ էին շրջում Նադիրի ծագման մասին: Ոմանք ասում էին, թե նա չվեյցարացի է, ոմանք՝ հուանդացի, ոմանք՝ անգլիացի, ոմանք՝ ֆրանսիացի: Նույնիսկ հավատացնում էին, թե նա ծնվել է Բրաունտ նահանգում, ուր, իբր թե, ապրում էր նրա քույրը՝ իր հրկու երեխաներով: Կար և մի պատմություն, որ հավատացնում էր, թե նա, ընդհակառակն, կովկասյան լեռնաբնակներից է և ծնվել է Դերբենդի մոտ: Միաժամանակ ասողներ էլ կային, թե նա զտարյուն պարսիկ է, սերված մի շատ հուշակված տոհմ

¹⁶ Կոստիկյան Բ., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Սերժավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Ե., 2004, էջ 363:

մից»¹⁷: Նադիրի անվան շուրջ հյուսվող նմանատիպ պատմութ-
յունները դեռևս այն ժամանակ գրիչ վերցնելու են մղում
առավել մոտիկից իրականությունը քաջատեղյակ անձանց:

Հենց այդպես է բացատրում իր աշխատություն ծնունդը
Վասիլի Բրատիչչևը, որը 1736-1745 թթ. գտնվում էր Իրանում՝
սկզբում որպես թարգմանիչ, իսկ հետագայում որպես Ռուսաս-
տանի կառավարության ռեզիդենտ¹⁸: «Ես ինքնին գուրով անդ և
լինելով ի բնիկ յերկրն Պարսից, — գրում է նա, — և ունելով
զբաւակնան յարմար և զգիպուկ ժամանակս իմանալ հաւաստի
յաղագս կացութեանց և որպիսութեանցն տեղոյն յայնորիկ,
վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարե-
ցի ինձ ծառայել հասարակութեան... քանզի ի բազմաժամա-
նակեայ լինելութեան իմում ի յերկրին Իրանայ, նաևս առաւել
գուրով իմ գրուսնսն արքունական Նադիր շահին աստիճանաւ
Ռուստաց կայսերական ղեսպանութեան, նաևս ոչ սակաւ, այլ
ըստ չափու և կարողութեան իմոյ գիտելոյս զլեզուս պարսից
ունէի բարեգոյն և վայելուչ հնարս պատկանաւոր ձեռամբ զա-
նազան հաւատարմաց սակս զստուգութեան այնպիսի անցիցն
անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ և հաստատել ի
նոսա, նաևս յաղագս բազմաց ակնատես ես իսկ լեալ»¹⁹: Այդ
է պատճառը, որ չնայած փոքր ծավալին Վ. Բրատիչչևի աշխա-
տությունը առ այսօր չի կորցրել իր նշանակությունը, և կարե-
վոր սկզբնաղբյուր է Նադիր շահի կյանքի ու գործունեության
ուսումնասիրման համար:

Վ. Բրատիչչևի աշխատությունը սկսվում է 1738 թ. իրա-
դարձությունների ներկայացմամբ, երբ Նադիր շահը շուրջ մեկ
տարի տևած պաշարումից հետո գրավել էր Աֆղանստանի
Ղանդահար քաղաքը և արշավանքի դուրս եկել դեպի Հնդ-

կաստան: Այդ ժամանակ, ապահովագրելով իրեն զանազան
անախորժություններից, Նադիր շահը Իրանի փոխարքա է
նշանակում իր ավագ որդի Ռզա-Ղուլի Միրզային²⁰: Վերջինս
իր պաշտոնավարումը սկսում է Սեֆյան շահ Թահմասպ II-ի և
նրա մանկահասակ որդիների դաժան սպանությունը:

Եվ մինչդեռ Նադիր շահը առաջնորդում էր իր բանակը
դեպի քաղաքական ճգնաժամի մեջ գտնվող Հնդկաստան,
Ռզա-Ղուլի Միրզան Իրանում քայլեր էր ձեռնարկում իր իշ-
խանությունն ամրապնդելու համար:

Մողոլական Հնդկաստանի ամենագոր տիրակալներ Աք-
բարի և Շահ Զահանի անգոր հետնորդը՝ Մուհամմեդ շահը
(1719-1748), ոչ միայն չկարողացավ քիչ թե շատ լուրջ դիմա-
դրություն ցույց տալ Նադիր շահի բանակին, այլև, ինչպես
գրում է պատմաբան Ղուլամ Հուսեյնը, «ճանապարհներն ու
լեռնանցքները չէին պաշտպանվում, և ամեն ոք կարող էր
[անարգել] անցնել դրանցով ցանկացած ուղղությամբ՝ մնալով
աննկատ: Տեղի ունեցող իրադարձությունների մասին ո՛չ մի
հետախուզական տվյալ չէր հաղորդվում արքունիք, և ո՛չ փա-
ղիշահը, ո՛չ էլ վեզիրը երբևէ նույնիսկ չէին հարցնում, թե
ինչու չեն ստացվում այդ տեղեկությունները»²¹: Այս խորա-
պատկերում ամենևին էլ զարմանալի չէ, որ երբ Նադիր շահը
1739 թ. փետրվարի 24-ին տեղի ունեցած Կառնալի վճռորոշ
ճակատամարտում գրոհի էր առաջնորդում իր զինվորներին,
Մուհամմեդ շահը զվարճանում էր հարեմում²²:

Տրամաբանական է նաև այս իրադարձությունների վեր-
ջաբանը. Կառնալի ճակատամարտում հնդկական բանակը
ջախջախելուց հետո 1739 թ. մարտի 20-ին Նադիր շահը հաղ-
թականորեն մտնում է Դելի: Կողոպտվում է Մեծ Մողոլների՝

¹⁷ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 220:

¹⁸ Энциклопедический словарь, изд. Ф. Брокгауз, И. Ефрон, т. IV^A, СПб., 1891,
с. 603, Тер-Мкртчян Л., Армения под властью Надир-шаха, М., 1963, с. 13.

¹⁹ Մատենադարան, ձեռ. N 9648, էջ 48բ-49ա (այսուհետև սույն ձեռագրի էջերը
հղելու ենք շարադրանքում):

²⁰ Мухаммад-Казим, Поход Надир-шаха в Индию, М., 1961, с. 70.

²¹ Синха Н., Банерджи А., История Индии, М., 1954, с. 278.

²² Кишмишев С., Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в
Персии после его смерти, Тифлис, 1889, с. 195, 198.

չուրջ 700 միլիոն ուսպի արժողութեամբ հարստութիւնը²³, այդ թվում և Մողոլ շահերի հպարտութիւնը հանդիսացող «Կոհ-ի-նուր» («Լույսի լեռ») հայտնի աղամանդը և «Սիրամարգի գահը»: Տիրանալով այդ երկրի անբավ հարստութիւններին, Նադիր շահը 1151 հ. թ. զի հեջըե ամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատում է պետական հարկերի զգալի մասից²⁴: Եվ մինչդեռ նա Մեծ Մողոլների անսահման հարստութեամբ բռնափորված վերադառնում էր Իրան, Մուհամմեդ շահը օգնութեան խնդրանքով իր արնաքամ եղող պետութեան տարբեր նահանգներն էր հղում աղերսագրեր հիշեցնող հրամանագրեր²⁵:

Վ. Բրատիչչևի երկում այս իրադարձութիւնները ներկայացված են հպանցիկ, հիմնականում Իրանում տեղի ունեցող դեպքերի հետնախորքի վրա, որտեղ մի խումբ դավադիրներ՝ արքայազն Ռզա-Ղուլի Միրզայի գլխավորութեամբ, իշխանութիւնը խլելու նպատակով մահափորձ են կազմակերպում Նադիր շահի դեմ: Արքայազնից բացի դավադրութեանը մասնակցում էին նաև նրա քեռին՝ սարդար Լոթֆալի խանը, հազարապետ Մահմեդ բեկը և մի վարձու մարդասպան, որի անունը Վ. Բրատիչչևը չի հաղորդում: Սակայն, 1741 թ. մայիսի սկզբին տեղի ունեցած մահափորձը ձախողվում է. կրծքին դրած ձեռքը փրկում է շահին անխուսափելի մահից: Այդ ընթացքում շահը հասցնում է տեսնել իր վրա կրակողի դեմքը: Նրա հրամանով պատկերահանները նկարում են վարձու մարդասպանի դիմանկարը, որը տարածվում է երկրով մեկ: Հենց այդ պահից էլ երկում սկսվում է իրադարձութիւնների սրընթաց զարգացումը:

Այստեղ հեղինակը վարպետորեն ներկայացնում է շահական արքունիքի՝ խարդավանքներով լի բարբերք: Պալատա-

կաններից ոմանք, օգտագործելով պատեհ առիթը, շահի առջև ամբաստանում են միմյանց՝ փորձելով նրա ձեռքով վրեժ լուծել իրենց հակառակորդներից: Սակայն, Նադիր շահը «հասուկից ստութեանց մատնչացն՝ արձակեաց զնոսա թարց պատժոց, ոչ ևս ընդունելով զայնպիսի զրպարտութիւնք» (57բ):

Այդ դեպքից հետո լեզգիների կողմից 1738 թ. սպանված եղորո՝ Իբրահիմ խանի վրեժը լուծելու նպատակով 1741 թ. Նադիր շահը 35 հազարանոց բանակով արշավում է Դաղստան, որտեղ կրում է իր կյանքի ամենածանր պարտութիւնը²⁶: «Աստանօր տիրապետ և յաղթօղն հզօր Նատիրն այնքան խոնարհեցաւ, — գրում է Հանվեյը, — մինչ զի քսան հազար խորտակեալ զօրօք միայն մնաց»²⁷:

Հենց այդ ծանր պարտութիւնից հետո էլ Նադիրի մոտ են բերում Բուխարայում բռնված վարձու մարդասպանին, որը, շահի հրամանով կուրացվելուց հետո, նրան պատմում է ողջ ճշմարտութիւնը դավադիրների մտադրութեան մասին: Շահը շուրջ վեց ամիս լռութիւն պահպանելուց հետո 1742 թ. ամռանը հրամայում է զորքի առջև խեղդամահ անել հազարապետ Մահմեդ բեկին: Վերջինիս՝ իրեն գլխու խնդրանքին Նադիրը պատասխանում է. «Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին ևս խնայիցէաք» (60ա):

Այնուհետև շահը Դերբենդի մոտ գտնվող իր բանակատեղին է կանչում արքայազն Ռզա-Ղուլի Միրզային: Այնտեղ էլ 1742 թ. հոկտեմբերի վերջին Նադիր շահի հրամանով Ռզա-Ղուլի Միրզան կուրացվում է²⁸: Այս փաստի հիշատակումով էլ Վ. Բրատիչչևի աշխատութիւնն ավարտվում է:

Այս իրադարձութիւնը, որն ընկած էր Վ. Բրատիչչևի երկի հիմքում, ճակատագրական նշանակութիւն ունեցավ ո՛չ

²³ Синха Н., Банерджи А., указ. соч., с. 279.

²⁴ Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 87-93.

²⁵ Паниккар К., Очерк истории Индии, М., 1961, с. 258.

²⁶ Սանրամասն տե՛ս Магомедов Р., Разгром войск персидского завоевателя Надир-шаха в горах Дагестана, Махачкала, 1940.

²⁷ Հանուէ, նշվ. աշխ., էջ 147:

²⁸ Տե՛ս Գաև Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, с. 217-218.

միայն կուրացվողի, այլև կուրացնողի համար: Այդ դեպքից հետո Նազիր շահի աստղը միանգամից խամրեց: Փաստորեն, Վ. Բրատիչչևի աշխատությունը Նազիր շահի անձնական ողբերգության պատմությունն է, անձնական ողբերգություն, որը վերածեց պետական դժբախտության:

Այդուհետև Նազիր շահի մղած պատերազմները, լավագույն դեպքում, ավարտվում էին անարդյունք: Իրանը թուրքաֆղանական ռազմակալումից ազատագրած ժողովրդական հերոսը վերածվել էր նենգ ու կասկածամիտ մի բռնակալի, որն իր մոտից «գրեթէ երբէք անվնաս ոչ թողոյր զոք գնալ»²⁹: Ծանր հարկապահանջությունը, որը հատկապես սաստկացել էր Նազիր շահի կառավարման վերջին տարիներին, լիակատար քայքայման էր հասցրել երկրի տնտեսությունը: Ժողովրդական ապստամբությունները ցնցում էին Նազիր շահի պետության խարխլված հիմքերը³⁰: Այսպիսի վիճակում էր հայտնվել Իրանը, երբ 1747 թ. հունիսի 20-ին Նազիր շահը դավադրաբար սպանվեց Խորասանի մոտ գտնվող ռազմաճամբարի իր վրանում, իր թիկնազորի պետ Սալեհ բեկի ձեռքով:

«Եւ այսպէս, անկաւ մտրակն արևելեան աշխարհին ի վաթսուն և ի մի ամաց հասակի,— գրում է Զ. Հանվեյը,— զկնի թագաւորելոյ ամս մետասան և ամիսս երիս, թողլով զկնի զյիշատակ դառնութեան, յետ վարելոյ զագգն համայն յատակս թշուառութեան, զօրինակ տալով մեզ, զի թագաւորն այն, որ փոխէ զգութն և զարդարութիւն (որք են զարդ և պայծառութիւն աթոռոյ տերութեան իւրոյ) ընդ վշտաց և անողորմութեանց, պարտէ նմա դիտել, թէ նախասահմանօղն Աստուած սանձահարեացէ զնա յաւուր միում և խափանեսցէ զգործս անօրէնութեանց»³¹:

²⁹ Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. 4, Ե., 1984, էջ 815:

³⁰ Ашрафян К., Антифеодальные движения в империи Надир-шаха (1736-1747),

«Ученые записки Института востоковедения», М., 1953, т. VIII, с. 166-204.

³¹ Հանուկ, նշվ. աշխ., էջ 174:

Նազիր շահի սպանությունից հետո գահ բարձրացավ նրա եղբորորդին՝ Ադիլ շահը (1747-1748), «արդարադատ» հորջորջված անարդար մի կառավարիչ, որի միակ հիշարժան գործը եղավ Նազիրի ընտանիքի ոչնչացումը: Հոր կողմից կուրացված Ռզա-Ղուլի Միրզան Նազիրի մահից շատ չանցած իր 13 որդիների հետ Քելաթում սպանվեց հորեղբորորդու կողմից: Նույն ճակատագրին արժանացավ նաև Նազիրի մյուս որդին՝ Նասերոլլահ Միրզան, որը սպանվեց Մեշհեդում: Շուտով եղբոր՝ Իբրահիմ խանի կողմից սպանվեց նաև Ադիլ շահը: Այսպիսով, Նազիր շահի ստեղծած լայնածավալ պետությունը արագորեն մասնատվեց, իսկ Իրանը սուզվեց գահակալական պայքարի հորձանուտը:

Ավելի քան երկուս ու կես դար է անցել Նազիր շահի իշխանությունից, այդ ընթացքում նրա մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն Նազիրին նվիրված մեծաքանակ գրականության առկայության պայմաններում էլ Վ. Բրատիչչևի փոքրածավալ երկը մնում է լավագույններից մեկը «երկրորդ Ալեքսանդր» հորջորջված Նազիր շահի բարդ ու հակասական կերպարի ներկայացման տեսանկյունից:

* * *

Հրապարակելով Վասիլի Բրատիչչևի «Բացատրություն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նազիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատության հայերեն թարգմանությունը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք հապավումները, իսկ բաց թողնված տառերը լրացրել ուղղանկյուն փակագծերի մեջ, ինչպես նաև անտեսել ենք «ի» նախդիրից առաջ դրված ապաթարցները և կետադրությունը սրբագրել ըստ արդի հայերենի կանոնների: Անտեսել ենք նաև թարգմանչի կողմից երբեմն բառամիջում անհարկի օգտագործվող «ը» տառը:

Չփոխելով թարգմանութեան ուղղագրութիւնը, տառա-
սխալները նշել ենք սովորականից տարբերվող տառատեսա-
կով: Որոշ դեպքերում, ընթերցողների շահերից ելնելով, միջա-
մտել ենք նաև թարգմանչի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբե-
րութիւնները տրոհելով ավելի մանր հատվածների:

Հոսով ենք, Վ. Բրատիչչևի աշխատութեան հայերեն
թարգմանութեան հրատարակումը կնպաստի Իրանի մեծագույն
տիրակալներից մեկի կյանքի և գործունեութեան ուսումնասիր-
մանը Հայաստանում:

Արտակ Մաղալյան
պատմական գիտութիւնների թեկնածու

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇՉԵԻ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ
ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՄԷՋ
ՇԱՀ ՆԱԴԻՐԱՅ ԵՒ ԱԻԱԳ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ
ՌԶԱ-ՂՈՒԼԻ ՄԻՐՋԻՆ
ՏՐՏՄԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՑ
Ի ՅԵՐԿՐԻՆ ՊԱՐՍԻՑ
ՅԱՄՍ 1741 ԵՒ 1742

Յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս հայոց
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱԻԹԵՆԻԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՑ

Քաղուժք ի յայլասեռ Հեղինակաց տքնին, զի ի զանազան լեզուս ի լոյս ածիցեն զճառս պատմաբանականս յաղագս գործոց և անցիցն անցելոց արքային պարսից Նաղիր շահի, սակայն որովհետև այնքան հեռաւորագոյն բացակացուլթեան գոլով կողմունսն Պարսկաստանայ, և շուրջ ամենայնի աշխատանօք շարադրօղքն զայնս հարկադրեն և աշխատ առնեն զինքեանս սակս արժանաւոր յիշատակի ճառեցմանէն հռչակաւոր առնս այսորիկ, բայց ես ինքնին գոլով անդ և լինելով ի բնիկ յերկիրն Պարսից և ունելով զբաւական յարմար և զգիպուկ ժամանակս իմանալ հաւաստի յաղագս կացուլթեանց և որպիսութեանցն տեղոյն յայնորիկ, վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարեցի ինձ ծառայել հասարակութեան:

Արդ, նախայայտ արարից այժմ, զի սոյն ասիացի այրս քաջայաղթ ի յառաջներորդ կիսոյ յայսմ դարու սկսաւ ցուցանել զփառս և զհռչակաւորութիւնս իւր այնքան և այնպէս, մինչ զի ընդ ժամանակս ժամանակս ամենայն հնարիւք, այսինքն՝ ի միում կողմանէ յաղթագօր բռնութեամբ, հետայոյզ պարփակմամբ և շուտափոյթ շարժողութեամբ, և ի միուսում կողմանէ քաղաքավար և քաջահնար գործովք և արիաբար հետևողութեամբ վերականգնեաց զհայրենին իւր և նստաւ յաթոռ իշխանութեան, զաղուանս նուաճեաց, յաղթեաց նաև զթագաւորն հնդկաց, որպէս առաջիկայ գրեցելոցս համառօտաբար ցուցանի: Իսկ ես յառաջին նուազիս նախածաման եղէ, զի կարացից յաղագս լայնատարած և ընդարձակ պատմութեանցն նորա միայն զգողբալի գործսն նորայ, զորս ինչ առ որդին իւր անցիցն լիագոյն ասացուածովք և առ նոյնն պատկանեցեալ որպիսութեամբքն առ ի բաւականութիւն ընթերցասիրացդ յայտնի առնել, քանզի ի բազմածամանակեայ լինելու-

Թեան իմուժ ի յերկրին Իրանայ, նաևս առաւել գոլով իմ դրունսն արքունական Նադիր շահին աստիճանաւ Ռուստաց կայսերական դեսպանութեան, նաևս ոչ սակաւ, այլ ըստ չափու և կարողութեան իմոյ գիտելոյս զլեզուս պարսից ունէի բարեգոյն և վայելուչ հնարս (49ա) պատկանաւոր ձեռամբ զանազան հաւատարմաց սակս զստուգութեան այնպիսի անցիցն անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ և հաստատել ի նոսա, նաևս յաղազս բազմաց ականատեսս ես իսկ լեալ:

Եւ ի աւարտիլ բանիցս մնամ առ քեզ, ո՛վ բարեմիտ ընթերցող՝ հանդերձ պատուով իմով

Վասիլի Բրատիչչօլ

(50ա) Յորժամ շահ Նադիր արշաւասոյր յաղթութեամբ էառ զանուանի քաղաքն աղուանից զՂանդահար³², եզ ի մտի իւրում և ձգեաց զդիտաւորութիւն իւր առ ի գնալ զինու զօրութեամբ ի հնդիկս և յաղթել զնա, որ և ընդ առաջին պատահման թարց ամենայն աշխատանաց էառ և տիրապետեաց զքաղաքն Ջէլիլաբաթ³³ ի սահմանս Հնդկաց:

Բայց ապա մտածեալ նորա սակս այնպիսի երևելի գործառ[ն]ութեանց և պատահմանցն որպիսութեանց ընդ կողմունս օտարս և հեռաւորագոյնս՝ յառաջադրեաց ի դատողութեան իւրում լինիլ յաջողութիւն, նաև զճախորդութիւն, և զսկսեալ արշաւումն ի վերայ օտար յերկրի ոչ կամեցաւ ի բաց դնել, ենթադատեաց բարեպետս լինիլ զերէց որդին իւր զՌիզայ-Ղուլի Միրզա, առ որ յատկապէս ծնողական վառեալ գութս սիրոյ ունէր, օգտակարս գոլ համարեաց յանձնել ի ցեղս իւր զժառանգութիւն թագաւորութեանն երկրին Իրանայ, սակս կասկածանաց իւրոց յայսմիկ արշաւմանէ վնասուց, վասնզի յայնմ ժամանակի շահ Թա[հ]մազ ընդ դեռահասակ որդովքն իւրովք³⁴ ենթ ակնարկութեան պահապանաց տակաւին կենդանի էր՝ կարգադրելով հաստատեաց զորդին իւր զՌիզա-Ղուլի Միրզա ի տեղի իւր փոխանորդ և տեղակալ թագաւորութեանն

³² Նադիր շահի բանակը Ղանդահարը գրավել է 1738 թ. մարտի 16-ին, մեկ տարի տևած պաշարումից հետո: Նադիրը ինքը քաղաք է մտել մարտի 17-ին (տե՛ս **Кишмишев С.**, Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, с. 144-145):

³³ Պարսից բանակը Ջալալաբադ է մտել 1738 թ. հոկտեմբերին՝ առանց որևէ դիմադրության հանդիպելու (տե՛ս **Кишмишев С.**, указ. соч., с. 164):

³⁴ Նադիրի կողմից գահընկեց արված շահ Թահմասպ II-ը իր դեռահասակ որդիների՝ Աբբաս III-ի և Իսմայիլի հետ քարոզվել ու պահվում էր Սաբզիվար քաղաքում (տե՛ս **Քյուչուք Արութին**, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», 1941, N 1, էջ 124):

Պարսից³⁵, տալով նմա լիապէս բարձրագու[յ]ն իշխանութիւն կառավարութեան, ի բաց հանելով միանգամայն ի ժառանգութենէն զհարազատ եղբայր իւր զԻբրա[հ]իմ խան³⁶: Եւ յազազս այսպիսիք գործառ[ն]ութեանց ինքն թաքուցանէր զանհանգստութիւն մտաց իւրոց՝ սակս հեռանալոյն իւրոյ ի պարսից և բացակացութեան: Եւ որպէսզի յայսմ պատահման դատաստանք և իրաւունք՝ արժանաւորաց պարզ և ամբարշտաց պատիժս, բաւականութիւնն զրկեցելոց և զայլ բարեգոյն կառավարութիւնքն ըստ կարգին և ըստ կանօնաց ի թագաւորութեանն լինիլ կարասցէին՝ հրատարակեաց և ծանոյց բոլոր երկրին հրովարտակօք: Եւ ընդ յանձնելոյն զիշխանութիւնն Պարսից (50բ) հօրէն առ զորդին թարց երկբայութեան տուեալ է նմա նաևս ծածուկ և յայտնի զոմանս պատուէրս լեզուաւ³⁷:

Եւ յայպէս, ի յերկրորդ կիսոյ 1739 յամին երկարեաց շահ Նազիր զճանապարհորդութիւնն իւր հեռաւոր ի կողմանս Հնդկաց³⁸, և Ռզա-Ղուլի Միրզա եկն ի ավթոռանիստ քաղաքն Խօրասանու գաւառին ի Մաշադ և եմուտ անդ և կալաւ զկառավարութիւնսն թագաւորական: Նախ և յառաջ ունեաց նա յոյժ հետևողութիւն և փոյթ՝ սակս անթերի ժողովման զզանազան հարկան թագաւորական, և սկսաւ յաւելուլ զնոսին զանազան պատճառանօք, և այնպէս մոտն եղև բազմաթիւ յոյժ ներկայ զրամոց, յայնժամ յաւել ևս նա արս պատերազմական ըստ մեծի մասին ձիաւորս՝ լիացուցանելով զնոսա առատապէս ամե-

նայն իրօք հարկաւորօք, նաև յենեալ և ապաւինեալ զապահով կացութիւն իւր, քանզի տեսանէր յիշխանութեան իւրում, զի ի միում կողմանէ ամենայն աստիճանաւորք թագաւորութեան և բոլոր ժողովուրդք լուրթեամբ ի հնազանդութիւն ինքեան կան, և ի միւսում կողմանէ անդադար և խորին մտածմամբ խորհէր իբր երկբայելի լինիլ գոյ զվիճակ հօր իւրոյ զսկսումն պատերազմին ընդ հնդկաց Մողոլին³⁹, վասն որոյ կամեցաւ ի գործ ածել զհնարս առ ի անկասկած լինելոյ զիշխանութիւն թագաւորութեան իւրոյ:

³⁵ Սեծ Սողուներ – Գնդկաստանի տիրակալների դինաստիա 1526-1858 թթ.: Օգտվելով Զյուսիսային Գնդկաստանի անկայուն վիճակից՝ Քարուլի կառավարիչ Բաբուրը ներխուժել է այնտեղ և 1526 թ. հիմնել Սեծ Սողունների պետությունը: Սողուններ անվանումն առաջացել է Զյուսիսային Գնդկաստանի և Սիջին Ասիայի մահմեդականներին հնդիկների տված մուղալ անունից: Սեծ Սողուններ անվանել են XVII դ. եվրոպացի ճանապարհորդները: XVII դ. Սեծ Սողունների պետությունն իր մեջ ընդգրկել է ամբողջ Գնդկաստանը (բացի ծայր հարավից), այժմյան Աֆղանստանի տարածքի արևելյան մասը և Փեմանակ: Նադիր շահի զագաթնակետին է հասել **Շահ Ջահանգի** (1627-1658) ժամանակ: Գործության զառավարչի ժամանակ Գնդկաստանի տիրակալն էր **Մուհամմեդ շահը**: XVIII դ. կեսին տիրել են միայն Դելիին և նրա շրջակայքը: Ձևակառուցել համարվել են Գնդկաստանի կառավարիչներ մինչև 1858-ը, երբ անգլիական գաղութային իշխանությունները վերացրին դինաստիան (նրանց մասին մանրամասն տե՛ս **Синха Н., Банерджи А.**, указ. соч., с. 275-277, **Паниккар К.**, указ. соч., с. 227-243, **Антонова К., Бонгард-Левин Г., Котовский Г.**, История Индии, М., 1979, с. 211-250, Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Ե., 1973, էջ 496-517):

³⁵ Նադիր շահն իր որդի Ռզա-Ղուլի Միրզային Իրանի փոխարքա է նշանակել 1738 թ. նոյեմբերի 7-ին (տե՛ս The Cambridge History of Iran, vol. 7. From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge University Press, Cambridge, 1991, p. 39):

³⁶ Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը Ատրպատականի փոխարքան էր, որը նստում էր Թավրիզ քաղաքում (տե՛ս Փափազյան Զ., Հայ-իրանական գիմակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, N 2, էջ 81):

³⁷ Ըստ Քյուչուք Արուսիանի՝ այդ «պատվերների» թվում էր և շահ Թահմասպ II-ի ու նրա ընտանիքի ոչնչացումը (տե՛ս Քյուչուք Արուսիան, Պատմություն Թահմասպ Դուլու, էջ 127):

³⁸ Նադիր շահն իր արշավանքը դեպի Գնդկաստան սկսել է 1738թ. մայիսի 21-ին (տե՛ս **Мухаммад-Казим**, Поход Надир-шаха в Индию, с. 8):

Արդ, զկեանք լինելութեան շահ Թա[Վ]մազին, որ իբր յառաջ եկեալ իցէ ի հնագոյն ցեղէն Սօֆիականէ⁴⁰, ընդ որդուովքն իւրովք երևէր ի յաչս նորա խոչընդակն և ընդ[ղ]իմական նպատակ. այնքան և մինչև ցայն վայր ոչ հանգեաւ սիրտ նորա, մինչև ըստ հրովարտակի իւրոյ զապաբախտ շահ Թա[Վ]մազ ընդ որդուովքն և ընդ յղի կանամբքն առաջի կիսոյ 1740 յամին ի քաղաքոջն Սաւզիվար տմարդապէս և զազանաբար ոչ ետ սպանանել զնոսա⁴¹: Եւ իսկոյն տարածեցաւ զլուր յայսմ սպանութեանց ընդ ամենայն Պարսկաստան և ոչ եղև այլ ինչ, եթէ ոչ զգալի աւաղումն աշխար[Վ]ումն և ի խորոց սրտէ հառաչումն, և եղեն ամենեքեան ի խորին լուութեան, քանզի (51ա) բռնութեամբ տիրապետութիւնն շահ Նադիրայ և իշխանութիւն կառավարութեան որդւոյ նորին այնքան վիրավորեալ էր զսիրտս պարսից, զի գրեթէ խելացնորք էին լեալ և յայնմ ժամանակի որպէս ի քուն թմրութեան կային:

Իսկ մնացեալ էր մի միայն դուստր Սօֆիական ցեղէն, որ էր հարազատ քոյր շահ Թա[Վ]մազին և օրինաւոր կին Ռզա-Ղուլի Միրզին⁴², որ համբերեաց նեղութեանց և դառնութեանց մինչև ցապաբախտ խղճալի վախճան իւր, քանզի թէպէտ և որքան ի սմանէ զլուրն սպանութեանց եղբօրն և որդւոց նորա թաքուցեալք լինէին, սակայն էհաս համբաւն յականջս նորա, իսկ նա ի առաջին պատահման տեսութեան յետ այսու լրոյն ի հարձնարանի անդ անհամբեր դառնութեամբ, կսկծալի սրտիւ սկսաւ զանբաւականութիւնս իւր լալազին աչօք և հառաչմամբ սրտիւ ասել զայս.

⁴⁰ Նկատի ունի Իրանում 1502-1736 թթ. իշխած Սեֆյան արքայատոհմը, որն իր ամվանումը ստացել է շիա մահմեդականների Սեֆևիյե աղանդի առաջնորդ շեյխ Սեֆի-էդ-Դիմի անունից: Սեֆյան թագավորական տոհմի հիմնադիրն էր շեյխ Սեֆիի սերնդից Իսմայիլ I-ը, որն իշխել է 1502-1524 թթ.: 1736 թ. Նադիր շահը վերացրել է Սեֆյան արքայատոհմի իշխանությունը:

⁴¹ Շահ Թահմասպի սպանության մասին տես Բյուչուք Արուքիմ, Պատմություն Թահմազ Դուլու, էջ 127:

⁴² Ռզա-Ղուլի Միրզայի կինը շահ Սուլթան Գուսեիմի դուստր Ֆաթիմա Սուլթան Բեգումն էր (տես The Cambridge History of Iran, vol. 7. Genealogical Tables, p. 960):

«Շահ Թա[Վ]մազ՝ եղբայր իմ գոլով, ի սկեսրառնէ իմմէ զրկեցեալ յամենայն ժառանգութենէ Պարսից աթոռոյն⁴³ և բնակելով ի յաքսորս՝ ոչ արար ընդդիմութիւն կամ վնաս ինչ առ իշխանութիւն Իրանայ երկրին, գոնեա և ոչ արարողութիւն ինչ գործեաց առ ի պատճառս տալոյ կացուցման առ նախկին կացութիւնս իւր, այլ մանավանդ թարց նենգութեան և տրտնջանաց ետ զբոլոր տիրապետութիւնն Պարսից ցՆադիր, և ըստ կարգաւորութեան և ըստ կամաց հաճութեան զօրաւոր Տեառն՝ միայն զհարկաւոր սակս ապրուստի նորա ոսծիկօք նորին թարց տրտնջանաց ողորմելի միակեցութեամբ և անարգ յանկեան միում անցուցանէր զտառապեալ կեանս իւր, իսկ զայս զի՞նչ չարութիւն իցէ, զի՞նչ զազանաբարոյութիւն և որպիսի՞ տմարդութիւն, որ բառնալ զկեանս նորա, որ սակս այնորիկ հրաժարեաց ի բոլոր թագաւորութենէն, կորուսեալ զնա, որ զկորուսանելոյ որդւոցն ներեաց, մեռուցանել զնա՛, ընդ որով փառօք և պատուով ինքեանք կենդանացան, ո՛հ երախտամոռ և անշնորհակալ ցեղ և ազգ Նադիրի, չորքոտանի անասուն, անդութ և անզգայ խստապարանոց գազան»:

Եւ այսպէս լեզու վշտալից և սրտաթափ թագաւորագն դատեր այլևս յաւել տարածեալ բանիւք երկարել կարեր, սակայն ո՛չ համբերեաց Ռզա-Ղուլի Միրզա այսոց վիրաւորեցուցիչ նախատական բանից, իսկոյն սուսերաւն ձեռամբ իւրով զբանն ընդ նոսին և զկեանս նորա բառնալով (51բ) եհատ և սպանեաց զնա՝ տալով նմա զպատիւն վերջին ի թաղման մարմնոյ նորա ի միում տեղւոջ ընդ եղբօր նորին յերևելի և յատուկ գերեզմանատան ի Մաշադ քաղաքի:

⁴³ Նկատի ունի այն հանգամանքը, որ Նադիրը 1732 թ. օգոստոսի 22-ին «ընկեց զՇահ Թահմազն ի թագաւորութենէն, և առաքեաց զնա ի Խորասան ի քաղաքն Սաւզբար, յորում պահել զնա զգուշութեամբ հրամայեաց: Իսկ ի տեղի նորա կարգեաց թագաւոր գիոքրագոյն մանուկ որդի նորա և անուանեաց զնա Շահ Արաս» (տես Տեր-Ավետիսյան Ա., Նադիր շահի արշավանքները (ըստ Յակոբ Շամախեցու), Ե., 1940, էջ 36-37, նույնի՝ Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акова Шамахеци, Тифлис, 1932, с. 9):

Եւ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ եկն եհաս համբաւ քաղցրալուր բարեբախտ և յաղթող շահ Նադիրայ՝ սակս յաղթելոյ զգլխաւոր և անուանի վերակացու և կառավարող երկրին Մօղոլայ զՆէսիրխանս⁴⁴, որ եկեալ էր մերձ Փլշաբար անուանեալ տեղւոյն ընդդէմ շահին ութն հազարաւ⁴⁵, նաևս լուրս բարիս վասն զօրութեանց և որպիսութեանց պատերազմական գործառնութեանց, որ յառաջադրեալ էր շահ արշաւել ի կողմն յայն հեռաւոր: Եւ ապա յետ համբաւոյս այսորիկ թարց յամեցման նորագոյն ևս էհաս լուր սակս առման հնդկաց հնագոյն աթոռանիստ քաղաքին Լահօռու⁴⁶, և ընդ յայսմ ազդարարական համբաւոյն շահ Նադիր զժողովուրդն յուսադրելով նախածանոյց առնէ⁴⁷ նաևս տիրելոյ զաթոռանիստ քաղաքն Ջհանաբաթ, այն է՝ Շահջանաբաթ⁴⁸:

Սակայն, այսպիսի նախագուշակումն ոչ եղև Ռզա-Ղուլի Միրզին կատարեալ հաւատալի, նաև բաց ի սմանէ մանաւանդ արգելէին զնա փառասէր կամեցողութիւնք նորա, որ և սկսաւ պատրաստիլ ինքն ծածկաբար առ ի տիրապետել զթագաւորութիւն Պարսից, ընդ յոր կամեցողութեան զհետևեցեալ որպիսութիւնք կարծեաց նորա զնա պնդապէս հաստատեցին: Նախ, զի յետ ստանալոյ վերջի[ն] համբաւոյն սակս առման Լահօռայ, մերձ յամիսս երիս այլևս ոչ եկն ամենևին այլ լուրս նորագոյն ի հօրէն իւրմէ կամ ի զօրացն պարսից, և այն, իհարկէ, վասն հեռաւորութեան և դժվարութեան ճանապարհին եղև: Երկրորդ՝ բնակողքն ի պարսիկս յազգէն հնդկաց, սակս խորոց

⁴⁴ Փեշավարի Նասր խանի զորքի դեմ Նադիր շահի մղած կռուի մասին տես՝ **Мухаммад-Казим**, указ. соч., с. 72-79, **Քյուչուք Արուքին**, Եջվ. աշխ., էջ 108:

⁴⁵ Նադիր շահի բանակը Փեշավար է մտել 1738 թ. նոյեմբերին (տես՝ **Синха Н., Банерджи А.**, указ. соч., с. 278):

⁴⁶ Նադիր շահի բանակը Լահոր է մտել 1738 թ. դեկտեմբերի 20-ին:

⁴⁷ Նադիր շահը Լահորից Դելիի վրա է շարժվել 1739 թ. հունվարի 15-ին (տես՝ **Кишмишев С.**, указ. соч., с. 189):

⁴⁸ **Շահջանաբաթ** - Դելի քաղաքը XVII-XVIII դդ. հայտնի էր նաև Շահջանաբաթ անունով՝ ի պատիվ Շահ Զահանի (տես՝ **Абрамян Р.**, Армянские источники XVIII века об Индии, Е., 1968, с. 182):



Նադիր շահի մուտքը Փեշավար
(Մանրանկար Մուհամմադ Քյազիմի
«Նամե-յե ալամարա-յե Նադիրի» աշխատության ձեռագրից)

սրտէ դառնութեանց և ակադմանց վասն հայրենեաց իւրեանց, տարածեցին ընդ ամենայն ուրեք զհամբաւս սուտապաճոյճս, իբր թէ բազմաթիւ զօրքն հնդկաց յաղթեալ իցեն զչահ Նադիր՝ նորոգելով և հաւաստելով զնոյնն ձեռամբ զանազան քաղաքականաց իւրեանց զհաստատութիւն ասացելոց իւրեանց:

Եւ ընդ ամենայն ժամանակս զայս Ռզա-Ղուլի Միրզա ոչ եկաց դատարկ, (52ա) քանզի լիապէս յղփացեալ իշխանութեամբ ընդ կողմամբքն վերագոյն յիշեցելովք և զբաղեալ փառօք թարց առողջ դատողութեան՝ սակս ձեռնարկութեան առ ի կատարել զկամեցողութիւն իւր ձևակերպեալ տպաւորեաց ի սրտի իւրում:

Եւ այսպէս ի Մաշադայ նորակերտ զօրօքն իւրովք ճանապարհորդեալ գնաց ի քաղաքն Թէհրան, վասն մերձ լինելոյ առ միջակէտս պարսից, նաև ուր կային զյատուկ գունդս զօրաց պատերազմօղաց արանց սակս զանազան նախազգաստութեանց: Եւ կոչեաց անդի հրօվարտակօք իւրովք զգլխաւորս, զօրավարս, գաւառապետս և զայլ կառավարիչս՝ անուամբ իբր տալոյ նմա հաշիւս արքունական ելումտից, և ի ժողովելոցս յայտոսիկ սակս ոմանց անձանց ծանուցին նմա բանիւ զանհաճելութիւն նոցա առ ի մատնումն զկեանս նոցին բառնալոյ: Եւ եկեալ տեղակալն աթոռոյն ի կողմանս Թէհրանայ, և հարեալ բանակս ի դաշտաւէտ և պատկանաւոր տեղիս, և սկսան զալ զօրավարք և պետք, գաւառակալք և զայլ իշխանս ի տեղի անդ: Եւ սկսաւ Ռզա-Ղուլի Միրզա ի մէջ այլոց գործառ[ն]ութեանցն իւրոց զհաշիւս ի նոցունց ստանալ, և վերահասու եղեալ ետես, զի ի բազում քաղաքաց կառավարիչք ո՛չ էին եկեալ անդ: Առաքեաց կրկին զսուրհանդակս՝ հարկադրել և ստիպել զնոսա, և այսպէս օրաւոր պարապելով առ արտաքին գործս կառավարութեան և կարգադրութեան՝ ենթադատեալ յառաջադրեաց նաևս զհետևողութիւն և զկամեցողութիւն իւր յայտնի առնել կատարելապէս, վասն որոյ յոյժ հարստագոյն ջղայ (պսակ), որ առ պարսիկս ի տեղի թագի դնեն ի յաջ կողմն

զլիտյն կազմեալ պատրաստեցաւ, տիպս հատանելոյ զզրամս ոսկիս և արծաթեա քանդակեալ եղեն, կնիքս նոր յարդարեցաւ, և խիլայս⁴⁹ սակս բաշխելոյ յոյժ բազումս կարեցաւ: Ապա և զայլ առ սոյն գործ պատկանաւորք և հարկաւոր զիրս կիրառնելեաց անթերի պատրաստեցան, քանզի պակասութիւնս իւրք ամենևին ոչ ունէր: Եւ մնաց միայն (52բ) օր և ժամ ի պարսիկս լսելի լինել՝ սակս փոխարկման անուան տեղակալին ի տիրապետութիւն թագաւորութեանն Իրանայ, ուստի և զաւուրս լուսնական առ նոյն գործ նշանակեցեալ էր:

Սակայն, նախասահմանութիւնն զամենայնն արգելեաց, քանզի յառաջ քան զաւուրս ինչ յանկարծակի և անսպասելի միջոցաւ սակս հաւաստի յաղթութեան և խորտակելոյ զգլխաւոր զօրքն հնդկաց և տիրապետելոյ զբանակս նոցա⁵⁰, և սակս խոնարհեցողցանելոյ զՄօղոլն ենթ հովանաւորութեան Նադիր չահի ի նմանէ առաքեցեալ հրովարտակս ստացեալ եղև⁵¹, նաևս թէ իւրոյ մեծութիւնն բախտաւոր յաղթանակիչ փառաւորապէս մտանել ի աթոռանիստ քաղաքն հնդկաց Շահջանարադ յուսա իսկապէս⁵²:

Եւ ի ստանալ համբաւոյս այսորիկ Ռզա-Ղուլի Միրզա, ճանաչելով զարարողութիւն իւր, վարէր հնարիւք և համեստաբար՝ այնպէս, զի ոչ բազումք, այլ ի հրաժարելոցն ի նմանէ սիրելեաց իւրոց յազազս համբաւոյս այսորիկ, որք տեղեակք

⁴⁹ Խիլա – հյուրասիրոթյան կամ զանազան տոների առթիվ կազմակերպված ընդունելութիւնների ժամանակ, հարգանքի և մեծարման նպատակով տրվող մեծարժեք նվեր, որը հիմնականում լինում էր շքեղ և թանկագին հագուստ (տես Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. II, կազմեց Յ. Փափագյանը, Ե., 1959, էջ 220):

⁵⁰ Նադիր շահի զորքերը 1739 թ. փետրվարի 24-ին Կառնակի ճակատամարտում ցախջախեցին Յնդկաստանի տիրակալ Մուհամմեդ շահի բանակը:

⁵¹ Այդ հրովարտակով Նադիր շահը որդուն ավետում էր իր հաղթանակի մասին և Իրանի բնակիչներին երեք տարով ազատում հարկերի զգալի մասից (հրովարտակի բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը տես **Арунова М.**, Фирман Надир-шаха, «Советское востоковедение», 1958, N 2, с. 116-119, **Арунова М.**, **Ашрафян К.**, Государство Надир-шаха Афшара, с. 87-93):

⁵² Նադիր շահի բանակը, իսկապես, 1739 թ. մարտի 17-ին կանգ է առել Դելիի մերձակա այգիներում (տես **Кишмишев С.**, указ. соч., с. 200):

էին, ի ծածուկ պահել կարացին, և նա ոչ եցոյց ումեք զդէմս իւր տխրատեսիլ, այլևս առաւել արտաքին նշանակութեամբ իբր ուրախանայր յոյժ՝ սակս այնպիսի փառաւոր յաջողութեանցն հօր իւրոյ: Եւ առաքէ պատկամս ընդ ամենայն գաւառս թագաւորութեան Պարսից՝ սակս յաղթելոյ զհնդկաց Մօղօլն և հրատարակէ ամենայն ուրեք⁵³:

Եւ ապա, յետ անցանելոց ավուրց ինչ և շաքաթուց, սկսաւ Ռեզա-Ղուլի Միրզա բարեկարգօրէն և խաղաղութեամբ զոմանս զօրապետս, գաւառապետս և զայլ քաղաքական կառավարիչս ի բաց արձակել յինքենէ՝ երթալ ի տեղիս իւրեանց, ուստի եկեալք էին, նաևս ի թիւս նոցա և զայնոսիկ, որք մատնեալք էին ի մահ՝ զերծան ի մահուանէ և մնացին ամբողջ: Իսկ ինքն երկարեաց զբնակութիւնն իւր ի դաշտս Թէհրանայ ենթ անուան և նշանակութեան՝ իբր պահանջելոյ ի նոցունց զհաշիւս (53ա) արքունի յեկելոց ի հեռաւոր տեղեաց քաղաքական կառավարչաց և բռնաւորաց:

Սակայն, բոլոր միտք և դիտաւորութիւնք նորա իսկապէս էին երկբայելի՝ սակս գործառ[ն]ութեանց Հնդկաց երկրին պատերազմական որպիսութեանցն հօր իւրոյ. ձեւակերպէր ի կարծիս իւր, իբր ի մտանել նորա ի քաղաքն Շահջանաբադ սակաւ զօրօք ի յօտար և լայնատարած քաղաքի անդ, շրջապատեալ, այսինքն՝ պաշարեալ լինի անհաւասար զօրացն իւրոց ընդ բազմութեան զօրացն թշնամեաց, ենթարկիցի պաբախտ վտանգից և փորցութեանց:

Բայց, սակայն, մտածմունք ընդ մտածմանց յոյժ տարբեր և հեռագոյն պատահեցան, և կարծիք նորա ո՛չ ընդ այնմ եղև, քանզի ի մտանել Նադիր շահին ի Շահջանաբադ⁵⁴ ել վաղվաղակի ի մէջ Հնդկաց զապստամբութիւնս և խռովութիւնս յոյժ

սաստիկ⁵⁵. այնպէս և այնքան, զի հասարակ երկուց կողմանց բոլոր բազմութիւն յոյժ արանց մտելոց անդ պարսից, յայնմանէ խռովութեանցն հազիւ թէ ենթ մահաբեր վնասուց և սաստիկ կոտորուածոց պարսիկք ո՛չ էին անկեալք, սակայն Նադիր զոլով փութածաման, խոհեմ և արի ի գործս իւր, յոյժ սաստիկ և ահարկու շարժողութեամբ զինքն և զզօրս իւր ազատեաց ի վտանկէն յայնմանէ՝ հեղլով զարիւնս բազում իբրև վտակա ջուրց ի տեղին յայնմիկ խառնիճաղանջ խռովարար ամբոխաց⁵⁶:

Եւ Ռեզա-Ղուլի Միրզա ի գարնան մինչև ցբոլոր ամառն 1740-երորդ յամին անցուցանէր զժամանակն ի կողմանս Թէհրանայ և սպասելով մնայր համբաւոյ ըղձալի կամեցողութեան իւրոյ ի յերկրէն Հնդկաց, իսկ հակառակ նմին առաքեալն շահ Նադիրայ յեկանելոյն իւրոյ ի Հնդկաց ճանապարհէ անդի զաստիճանաւոր այր ոմն, որում անունն Քէրիմ բէգ, առ Դուռն Օսմանցուց հանդերձ արքունական գրովք, և ի գնալն նորա ի վերայ երկրին Պարսից ժամանակս աշնան ներկայացեալ յայտնեցաւ առաջի Ռեզա-Ղուլի Միրզին և պատմեաց նմա զհաւաստի որպիսութիւնքն ամենայն, և թէ շահ բարեյաջող (53բ) առողջութեամբ զօրօքն իւրովք անդրէն դառնալով գայ, բայց տեղակալն աթոռոյն ասացելոցն ևս յոյժ դժկարին կամէր հաստալ:

⁵⁵ Ձոնս Յանվեյը Դելիի բնակիչների խռովության մասին գրում է. «Ախտ Նիազ խանն ընդ այլ երևելի արանց գլուխ լինէր նոցա, և սպանանէին զՊարսիկսն» (տե՛ս Յանուէ, Եշվ. աշխ., էջ 116):

⁵⁶ Ձոնս Յանվեյը Դելիի բնակչության կոտորածի մասին գրում է. «Եւ սփռեցան զօրք Պարսից ընդ քաղաքն, և սկսան խորտակել զգրուս տանց և պալատից, և կոտորել զժողովուրդն անսամ զստմութեամբ, ոչ ի հասակս և ոչ ի ցեղս խնային... Եւ կոտորածն սկսանէր ի յութն ժամէ առաւօտուն մինչև ցեղք ժամն զկնի կեսաւորն, այսինքն՝ յերկուց ժամուց առաւօտուն մինչև ցինն ժամն: Եւ արք իբրև չորս հարիւր ի Պարսից ազգէն մեռանէին, իսկ ի ժողովրդենէ քաղքին ոչ նուազ քան հարիւր և տասն հազար անձինք կորնէին» (տե՛ս Յանուէ, Եշվ. աշխ., էջ 116-117): Յանվեյի տվյալները խիստ չափազանցված են: Ըստ հնդիկ պատմաբանների՝ Դելիի կոտորածի ժամանակ զոհվել է 20000 մարդ (տե՛ս Տինխա Ն., Բաներձի Ա., указ. соч., с. 279):

⁵³ Անգլիացի ճանապարհորդ Ձոնս Յանվեյը այդ կապակցությամբ գրում է. «Արդ, ցնծութիւն մեծ լինէր Պարսից ի լսելն զյաղթութիւնն թագաւորին իւրեանց ի վերայ Յնդկաց արքային» (տե՛ս Յանուէ, Եշվ. աշխ., էջ 119):

⁵⁴ Նադիր շահի բանակը Դելի է մտել 1739 թ. մարտի 20-ին (տե՛ս Мухаммад-Казим, указ. соч., с. 27):

Եւ ապա, յորժամ սկսան ի բանակէ շահին գալ յաճախակի սուրհանդակս առ նա՝ հանդերձ հրովարտակօք, ընդ յոր և ի մէջ այլոց բանից հրամայեցեալ էր նմա երթալ ընդառաջ ծնողին իւրոյ ի սահմանական քաղաքն Հէրաթ: Յայնժամ Ռզա-Ղուլի Միրզա հարկաւորեալ լինի զրկիլ ի լրացուցմանէ կամեցողութեան իւրոյ: Բայց, սակայն, մասամբ ինչ ոչ սակաւ փափկանայր ճաշակմամբ բարձր իշխանութենէն և քաղցրանայր ի պտղոց նորա, քանզի ո՛չ կարաց համբերել արդէն, զի միջնորդութեամբ պատրաստութեանն ի ժամանակի իւրում սպասել, այլ սկսաւ ձեռնամուկս լինիլ առ ի փութապէս իւրացուցանել զիշխանութիւնն Պարսից այլովք հնարիւք՝ այսու կերպիւ:

Յայն]մ ժամանակի էր ի մօտ նորա ըստ կարգաւորութեան հօր իւրոյ զհարազադ քեռի մօր նորա՝ զսարգար (զլխաւոր զօրապետ) Լօթֆալի խան, որ առաջին կարգադրօղ, գիտակ և մասնակից ծածուկ խորհրդոց և գործոց Ռզա-Ղուլի Միրզին, խորհրդակից էր նմա: Արդ, քեռորդին ընդ քեռոյն իւրոյ առանձին սկսաւ ասել հառաչմամբ սրտիւ այսպէս.

«Ժամանակ և բախտն ո՛չ ետուն թոյլ առ ի լցուցանել ինձ զկամեցողութիւնս իմ. թէպէտ ո՛չ եմ երկբայ սակա ջերմագոյն սիրոյ հօր իմոյ, որ ունի առ յիս, և ըստ օրինաց աթոռն հայրենական ինձ պատկանի, քանզի ես անդրանկածին եմ իսկ, սակայն յոյժ համբերութիւն և բազում ժամանակ սպասել պարտիմ, բայց ո՛վ որքան կենդանի մնալ կարէ, զայն իմանալ ո՛չ է կար: Հայր իմ այժմ այսպիսի յաղթանակութեամբք փառաւորի և ամրակազմ անձամբ իւրով ո՛չ երբէք կամեսցի խաղաղութեամբ կեալ, զի ի նմա գոն երկարատես մտածմունք կամեցողութեան և օրաւոր նորագոյնս ծնանին, ամենայն ուրեք ի գործառ[ն]ութիւնս և ի բանս ինքնին ի յատեան դատողութեան նստի, զինքն հռչակաւոր փառօք զարդարէ, անուն նորա ահաւոր ձայնիւ տարածի, սաստիկ պատերազմաւ յաղթեցեալքն յաւելու, և զերկիրս Պարսից աւերել ո՛չ զադա-

րի: Այժմ ես (54ա) բարեգոյն չափու հասակի եմ, իղձ և զուարթութիւն արիութեան իմոյ կորուսանել պարտաւորիմ: Լուար յինէն դու, թէ որպէս գրէ սակա գնալոյ իմոյ Հէրաթ ընդառաջ նորա: Նա այժմ ոչ է այն, որ ի Ջէլիլաբադ հաստատեաց զիս լինիլ տեղակալ Պարսից աթոռոյն, սակա որոյ ընդ իս առանձին ծածուկ խօսակցեաց. նա յայնմ ժամանակի, ի գնալն իւրում [ի] հնդիկս, ո՛չ յուսայր այնքան բազումս ստանալ անդի: Իրաւի, լախտաւոր է հայր իմ և բախտաւորագոյն, այլ ես այժմ զիս ասպաբախտ անուանել կարեմ, քանզի պարտաւորիմ առ նա գնալ և լինիլ հաւասարակից կարգաւ այլոց օտարաց, բայց միայն թագաւորազնութեան անուամբ յօտարաց զանազանիլ կարեմ: Զի՞նչ ապա ուրեմն մխիթարութիւն և ապաւէն ի սմանէ ինձ, որպիսի կերպիւ ենթադատել կարես, ո՛վ սիրելի քեռի իմ, ի գործոցս յայսցանէ»:

Եւ Լօթֆալի խան յաղազս այսորիկ հրաժարեցաւ զհետեցեալ բանիւքս այսօքիւք.

«Ո՛վ բարձրապատիւ, մի՛ տրտմիր, քանզի ըստ օրինաց իրաւունս ունիս ծննդեամբդ, նաևս յատուկ իմն շնորհս պարգ[և]աց գոն ի քեզ, և յոյժ գովելի են որպիսութիւնք և գերազանցութիւնք քո, մանաւանդ ո՛չ սակաւ փորձառութեամբ ցուցան իմաստնաբար կառավարութեան քում, զորս գ[և]րեցին զսիրտք պարսից՝ նոքա միշտ ի սրտէ ցանկան լսել զանուն թագաւորութեան քոյ: Թո՛ղ ուրեմն, թէպէտ հայր քո շահ Նադիր ուրախացուցեալ է զնոսա, շնորհելով նոցա զհարկսն երեքամեայ⁵⁷, սակայն զինչ լինելոց իցէ, ապա ըստ յայտնի բնութեան նորա, որ պահանջիցէ ևս քան զևս առաւել ի նոցունց: Արդ, պարսիկք պատուեն և սիրեն զքեզ, որպէս բարձրապատութիւն քո գիտէ, որ ի կառավարութեան քում ի զանազան

⁵⁷ Ակատի ունի այն հանգամանքը, որ Նադիր շահը Գնդկաստան արշավելուց և 1739-ին Դելիւ գրավելուց հետո, տիրանալով այդ երկրի անբաժնի հարստութիւններին, 1151 հ.թ. զի հեջըն ամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատել է հարկերի զգալի մասից (տե՛ս Арунова М., Ашрафян К., указ. соч., с. 87-93):

պատահմունքն նշանակեալ փորձեցեր զնոսա, իսկ այժմ արգելէ ժամանակն, տէ՛ր իմ, որ քոյին բարձրագոյն արժանապատուութիւնն ընդ արձակութեան իւրում ի կիր առնել կարասցէ: Արդ, այժմ արա՛ շնորհս ստանալ զհամբերութիւնս»:

Առ այն ասաց Ռզա-Ղուլի Միրզա. «Մինչև ցե՞րբ կարեմ համբերել»:

(54բ) Իսկ Լօթֆալի խանն ընդառաջ մատուցեալ ասաց.

«Իրաւի, զի հնագոյն և նորագոյն պարսից և այլ թուրքմանաց տարեցուցք հաստատուն ցուցանեն, թէ՛ որով կերպիւիցեն պատահեալ զստացումն որդւոց զժառանգութիւնն հայրենեաց, այսինքն՝ միջնորդութեամբ ելանելոյ աստի կենացս առ հանդերձեալն հարց իւրեանց: Ահա՛, յայտնի իսկ է, զի Նազիր՝ հայր քո, բաւական փառօք եկաց, իսկ արդէն ընթանայ նա առ հասակս վերջին⁵⁸, ահա ժամանակ է նմա անդրաբնակիլ յերկինս, և քեզ իսկ՝ փթթեալ հասակաւ թագաւորագնիդ, իշխել արժան է ի վերայ երկրիս, և զայս ո՛չ է նորագոյն, այլ ի վաղուց հետէ եղեալ գործ»:

Քեռորդին էհարց ի քեռոյն. «Ուրեմն այսպիսի պատահման ո՞րպիսի կերպիւ կարէ հետեւել հնագոյն օրինակին»:

Եւ Լօթֆալի խան հրամանաւ նորա ել արտաքս առ ժամ մի, և կոչեաց ի յազգականացն զհազարապետ մի, որում անունն Մահմէդ բէկ, ի ցեղէն ավշարաց, ուստի և զՆազիր շահ ունի զսկիզբն իւր: Հրամայեաց նմայ, զի բերցէ զանուանի հրացանակիր նշանահար ոմն ի պարսից⁵⁹ տարաշրջիկ արանց, յոյժ հմուտ ի արհեստս իւր. առ ներկայութեան Ռզա-Ղուլի Միրզին, իբր թէ յաղագս զբօսանաց ցուցանիցէ նմա զճարտարութիւն իւր: Իսկ նա այնքան հմուտ էր, զի չափ ստակի միոյ բոլորակութեան զնաակաւ հարու կարէր անսղալ: Հաւանեաց յայսմ քաջն համարձակ, և ո՛չ մնաց նմա սակս այլոյ իրիք

⁵⁸ Այդ ժամանակ Նադիր շահը 52 տարեկան էր:

⁵⁹ Ըստ Ձ. Յանսկիի՝ այդ դիպուկահարը ոչ թե պարսիկ էր, այլ աֆղան (տե՛ս Յանուէ, Եզվ. աշխ., էջ 138):

խորհուրդ առնել ընդ քեռոյն իւրոյ՝ ունելով ի ձեռին իւրում նիւթս յարմար և հնարաւոր ընդ արձակութեան, որ ի գործ ածիցէ: Եւ այսպէս թարց ամենայնի յամեցողութեան խորհուրդ վասն հայրասպանութեան ի մէջ երից անձանցն հաստատեցաւ ենթ երդման, սակայն զնոյնն ոչ յառաջ ի գործ կատարել, քան զդառնալ շահ Նազիրին անդրէն ի Պարս, նաևս ի յայնմ ժամու կարի յոյժ զգուշութեամբ, և ընտրել զժամանակ և պատկանաւոր յարմար տեղիս:

Յաղագս խորհրդոյ այսորիկ նաև հազարապետն Մահմէդ բէկ գիտակ եղև, որպէս սակս այսորիկ առաջիկայ գրեցելոցն (55ա) յայտնի լինելոց է: Եւ Ռզա-Ղուլի Միրզա, բացի խոստմանցն յոյժ բազում պարգևաց ընդունողին զայնպիսի եղեռնագործութեան, ետ նմա վասն ապրուստի նորա մինչև զերեք հարիւր թուման, որում ենթ անուանակոչութեան եկամուտ առն թողեալ՝ զնաց ի ճանապարհս իւր առ կողմունսն սահմանական, յորմէ յետէ սպասէր ի գալստեան Նազիր շահին իսկ:

Եւ տեղակալն աթոռոյն ընդ յառաջ ելանել հօր իւրոյ յոյժ յամրապէս պատրաստիւր, սակայն ստացեալ կրկին զհարկադրական հրովարտակ յաղագս այնորիկ, նաևս վասն հաշուից ի ժամանակի կառաւարութեան իշխանութեան արքունական ելումտից, յայնժամ հարկադրեալ եղև կատարել զկամս ծնողին իւրոյ: Եւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ի բոլոր կառավարութեան իւրում՝ զժողովեալսն ի պարսից ենթ զանազան զրպարտական պատշառանաց և յափշտակողական կերպիւ, բացի հարկիցն արքունական, զբամս երկու հարիւր հազար թուման ետ ի պահեստ ի ձեռս առն հաւատարմի: Եւ ինքն ընդ պատերազմական զնդիւ զօրօքն իւրովք, նաև զքեռին իւր ընդ նմա, ի միջակետէ պարսից ել խաղաց զնաց աճապարմամբ ի ճանապարհ՝ առ նշանակեալ տեղին, և վերջապէս ի մօտաւոր կողմանցն Հէրաթայ⁶⁰ ներկայացեալ յայտնեցաւ որդի արքային

⁶⁰ Նադիր շահի բանակը Յերաթ էր հասել 1740 թ. հունիսի 4-ին (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 211):

առաջի ծնողին իւրում և մատոյց նմա գրով զհրամայեցեալ հաշիւսն:

Եւ շահ Նաղիր յայնմ ժամանակի, վասն յաղթելոյ զհնդիկըս, շահունշահ անուանիւր, որ և ընկալաւ զորդին իւր առաւել իբրև զթագաւոր, քան թէ ծնօղ: Աստ մարթէ իմանալ, զի զայս փոխարկութեան սիրոյ պատճառն յամեցողութիւն յանդիման գնալոյ որդւոյն իւրոյ եղև: Եւ Նաղիր այլևս ի նմին աւուր մեծամեծ նախարարովքն իւրովք արար հանդէս տեսութեան զօրականացն գնդին բերեցելոյ որդւով նորին, և հրամայեաց բաժանել զնոսին ի գունդսն իւր, և Ռզա-Ղուլի Միրզին լինիլ և մնալ ի դրունս արքունի, սակայն թարց ամենայնի գործակալութեան⁶¹, քանզի կառավարութիւնն գլխաւոր ի վերայ Պարսից վերստին անուամբ շահին (55թ) գործ առեալ եղև, և ետ ցլօթֆալի խան ըստ աստիճանի նորա նախարարութիւն ի վերայ սահմանական զօրացն պատերազմողաց:

Եւ ապա, յորժամ շահ Նաղիր առ ի տիրապետել զԲուխարայ և զԽիւայ ճանապարհորդեաց և եմուտ յերկիրն թշնամեաց, կարգաւորեաց զորդին իւր սպառազինութեամբ՝ առ ի որոնումն և ըմբռնումն զօղբէգս⁶² ի զանազան շրջակայ կողմունսն արշաւանօք, առ յորս նա առաւել կորոյս, քան թէ ստացաւ, նաև փութով հիւանդացաւ այնպէս, զի հայրն ոչ հանդուրժեաց զտեսանել զնա, որ և ի նոյն ժամանակի բոլոր զօրքն պարսից սակա ջերմագոյն սիրոյ հօրն առ զորդին ականատես հաւաստի գոլով վկայաբանէին: Եւ Նաղիր մխիթարէր զորդին իւր զՌզա-Ղուլի Միրզա քաղցր բանիւք, նաև խոստացաւ շնորհել նմա ի յառողջանալ նորին՝ գնալ ի գաւառն Խորասանու ի քաղաքն Մաշադ, վասն հանգիստ բնակութեան նո-

⁶¹ Ռզա-Ղուլի Միրզան կառավարել է Իրանը մինչև 1740 թ. մայիսը, երբ Նաղիր շահը վերադարձել է Յնդկաստանից (տե՛ս Մատենադարանի պարսկերէն վավերագրերը. հրովարտակներ, պր. IV, կազմեց Զ. Կոստիկյանը, Ե., 2008, էջ 14):

⁶² Նաղիր շահի այս արշավանքի մասին տե՛ս Գանուէ, Եշվ. աշխ., էջ 135-137, Шеманский А., Надир-шах и его походы в Афганистан, Индию, Бухару, Хиву, Туркмению, «Средняя Азия», Ташкент, 1911, кн. VIII, IX.

րին, որ և ի ժամանակին անդ գնացեալ եղև իսկ և կատարեալ առողջացաւ ի հիւանդութէնէ իւրմէ:

Եւ ի դառնալն հօր նորին՝ նորապէս յաղթօղն Բուխարու և Խիվու ի Խորասան յամի 1741, տօնախմբեցին որդւովն ի միասին զօր տարեմտին պարսից, որ կարգաւորեալ է ի նոցունց ի սկսանիլ գարնան, քանզի հասարակաբար պատահի ըստ տօմարի տեղւոյս իննեորդ աւուր մարտի ամսոյն: Ի սմին աւուր Նաղիր, ըստ կամեցողութեան իւրոյ, շինեցեալ անհամեմատ գնոց պսակն (գիւղեմ), որ անուանեալ էր նաղիրաւ կամ պատուական ոստ պսակի՝ զչորս խաչաձև ջղայից, յոյժ հարստագոյն և մեծագին պատուական ակամբ զարդարեալ, ի նշանակութիւն իշխանութեան իւրոյ ի վերայ չորս թագաւորութեան, այսինքն՝ Պարսից, Հնդկաց, Մեծի Թաթարաց և զՕսմանցուոց թագաւորութեան, քանզի նա՝ տիրելով զպարս, յաղթեաց զհնդիկս, և Բուխարայ ընդ Խիւաւ և գԲալխ, որ է գլխաւոր երկիր Թաթարաց, և զսուլթանն Օսմանցուոց⁶³ ի սրտի իւրում կանխապէս տպաւորեալ էր յաղթել⁶⁴, որ և զայսու խորհրդով զպատուական ջղայն զայն եդ ի գլուխ իւր: Այնուհետև, ընդ ամենայն ժամանակս կենաց իւրոց մինչև ցվախճան իւր⁶⁵, միջոցաւ վեց և կէս ամաց, այլևս ոչ երբէք եդ զպսակն զայն ի գլուխ իւր, բայց միայն հուչակիւր զանուն նորին՝ անգին պսակ կամ ջղայ Նաղիրայ:

Եւ որպէս անփոփոխ կամեցողութեամբ յօժարեաց (56ա) նա ուժգին զօրու զօրութեամբ և արշաւանօք խաղալ գնալ և յարձակիլ ի վերայ Դաղստանայ լեռնաբնակաց ի վրէժխնդրու-

⁶³ Այդ ժամանակ Օսմանյան կայսրության սուլթանն էր Մահմուդը (1730-1754):

⁶⁴ 1743 թ. աշնանը Նաղիր շահը նորից պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ, նպատակ ունենալով գրավել Բաղդադը: Կռիվները փոփոխակի հաջողություններով շարունակվեցին մինչև 1746 թ.: Թուրք-իրանական 1743-1746 թթ. պատերազմն ավարտվեց 1746 թ. սեպտեմբերի 4-ի հաշտության պայմանագրով (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Ե., 1961, էջ 177-178):

⁶⁵ Նաղիր շահը դավադրաբար սպանվել է 1747 թ. հունիսի 20-ին, Խորասանում, իր վրանի մեջ (այդ մասին տե՛ս Գանուէ, Եշվ. աշխ., էջ 172):

Թիւն անդր կորուսելոյ զհարազատ եղբօր իւրոյ զԻբրահիմ խանին⁶⁶ (սակայն զստու[յ]կ էութիւն յայսմ գործառ[ն]ութեան ի նմա զայլ իմն երկարատես մտածմունք գոյին, յաղակս որոյ աստ յիշելն ոչ է մեզ տեղի)⁶⁷, նոյնպէս և կարգաւորելով զճանապարհս իւր՝ ընթանալ ի կողմանս գաւառացն, եղելոց առ ծովեզերքն Կասպիական՝ թողլով զայնս ի յաջակողմ առ յետկոյս լեռանցն, առ յոր կողմունս, մանաւանդ՝ ընդ յայս ճանապարհ յանդիման Մազանդարանայ և Գիլանայ, ուր ամենայն եզերտքն են անտառախիտ տեղիս: Իսկ գլխաւոր դիրք բնի զօրացն կային բանակաւ բացատութեամբ ի միմեանց ի վերայ ոմանց վերստաց՝ մօտ առ քաղու[յ]ղ գումբէթ ի կողմանսն Թէհրանայ, ուր հրովարտակօք շահ Նադիրայ յառաջագոյն կոչեցեալք էին յամենայն քաղաքաց բոլոր Պարսկաստանայ յամենայն ազգաց հոգևոր անձանց, նախարարաց, քաղաքապետաց, ծերակուտից և արանց աստիճանաւորաց: Սակայն առ զի՞նչ վախճան այսպիսի ընդհանրական ժողովքն կազմեցաւ պատրաստեցաւ, առ այս հաւաստին գիտացեալ ոչ եղև, քանզի խորին և ծածուկ կամք շահ Նադիրայ ճանաչել և իմանալ էր յոյժ դժուարին:

Եւ յաղագս այսորիկ տարածեցաւ ի մէջ ազգացն զանագան կարծիս. ոմանք կոչուամ զայս միայն առ այս հաստատէին, թէ Նադիր ի աւարտել զայնպիսի հռչակաւոր և երեւելի յաղթութիւնսն, կամեցաւ փառաւորապէս ցուցանել յաշխարհի իւրում, այլք կարծէին, թէ նա զանմեղութիւն իւր սակս արեան շահ Թա[հ]մազին առաջի այնքան բազմութեան ժողովելոց կամի խոստովանիլ: Իրաւի, զի յառաջակայք (56բ) յանդիման շահ Նադիրայ, ի մէջ այլոց խօսակցութեանց, ի բերանոյ նորին

⁶⁶ Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը սպանվել էր 1738 թ. լեզգիների դեմ մղած կռիվներից մեկում (տե՛ս Иванов М., Очерк истории Ирана, М., 1952, с. 102):

⁶⁷ Ըստ այլ կարծիքների՝ Նադիր շահի դադստանյան արշավանքը կովկասյան լեռնականների շրջանում Ռուսաստանի աճող ազդեցությունը թուլացնելու նպատակ էր հետապնդում (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 214):

անգամ մի լուեալ են զտրտունջս, իբր թէ ափսոսայր այսու կարճարօտ բանիւս.

«Անպիտան պարսիկք սպանին զողորմելին Թա[հ]մազ Միրզա»:

Իսկ այլքն հմտագոյնք, իմանալով զբարձրաթուիչ միտք արքային և հասու գոլով շաւղաց նորին (զի ըստ հրամանի նորա գրեանքն Օրինաց, զսուրբ Աւետարանն, զհինգ դիրքն Մօվսէսի, Սաղմոսն և Ղօռանն ի լեզուս պարսից ի քաղաքն Ասպահան թարգմանեցեալ էին), եզր կացուցեալ հաստատէին, թէ պարտ էր լինիլ վերահասութիւն՝ սակս նոր հաւատոյ ապագայ հաստատմամբ Նադիրին⁶⁸:

Սակայն, զայսոց երից կարծեացն և ոչ զմինն կատարեցաւ ի էութեան իւրում՝ ի պատշառէ ժամանեցեալ ապա չարավնաս պատահմանն, որ հետեւեալ տեսանի: Եւ ընթացք ճանապարհորդութեան հետեւիւր, և շահ Նադիր մեծի մտածմամբ սակս գործառ[ն]ութեանց և որպիսութեանցն ի վերայ Դադստանայ և առ յայլ հեռաւոր տեղիս մտածէր, և Ռզա-Ղուլի Միրզա ի սիրտս իւր ուրախանայր յաղագս յարմար հնարին առ ի կատարումն հայրասպանութեան ընդ ճանապարհաւն ընդ այն ըղձալի կամեցողութեան իւրոյ: Իսկ կաշառակուր հրացանակիրն այն սակս կորստական գործոյն իւրոյ, յորժամ լուաւ փութով զգալուստ շահի առ վերոյ գրեցեալ ճանապար-

⁶⁸ Իրանում Ռուսաստանի ներկայացուցիչ Ի. Կալուշկինը Պետերբուրգ ուղարկած իր հաղորդագրության մեջ հայտնել է, որ Նադիր շահն իր մոտ է հրավիրել հայոց քահանայապետերի, կաթոլիկ եպիսկոպոսների, մուլաների և րաբբիների ու հանձնարարել նրանց պարսկերեն թարգմանել Ավետարանը, Գործք Առաքելոցը, Թալմուդը և Ղուրանը, որպեսզի սուրբ օրենքների միջև եղած տարբերությունները հաշվի առնելով ստեղծվի մի այնպիսի նոր կրոն, որն Աստծուն հաճո լինի: Նադիրը չէր թաքցնում, որ ինքը ձգտում է ոչ միայն Իսլամի գլխավոր աղանդների, այլև բոլոր մեծ կրոնների մերժեցմանն ու հավասարակշռությանը, քանի որ սուրբ գրքերի ուսումնասիրությունից համոզվել էր, թե Աստված բոլորի համար մեկն է, ուստի և Աստծո օրենքն էլ բոլորի համար պետք է միևնույնը լինի: Նադիրի կրոնական քաղաքականությունը մերժվեց Նաջաֆի իսլամական ժողովի կողմից (տե՛ս Բալայան Բ., Նադիր շահի կրոնական և հակաթուրքական քաղաքականությունը, «Իրան-նամե», 1993, N 5, էջ 12-15):

հաւ, ոչ յամեցաւ թողուլ զժամանակն և հասանիլ ընդառաջ ի պատկանաւոր և յարմար տեղիս, և թափչիլ ի մէջ անտառի ընդ ճանապարհաւն այն:

Իսկ Նաղիբ ի դառնալն իւրում ի Հնդստանայ, բացի պատահմանց՝ սակս գործառ[ն]ութեան ինքեամբ վասն հետազօտելոյ և արշաւելոյ ընդդէմ թշնամեաց, գրեթէ մշտապէս ի ճանապարհագնացութեան իւրում ընթանայր ընդ հարճսն իւր՝ հեծեալք ի յերիվարս, և վասն փառաց և մեծութեան անուան իւրոյ և պահպանելոյ զկեանն իւր, նաև՝ զի զճանապարհն ոչ արգելցի յուճեքէ, հասարակաբար երկու գունդս զօրաց յառաջադիմաց կարգաւորեցիւր ընդ իւր. մինն ընթանայր ընդառաջ բացատութեամբ կէս (57ա) վերստոյ, և միւսն գնայր ի յետուստ նոյնքան հեռաւորութեամբ, և ի մէջ այսոց զօրաց շահն ընդառաջ հարճից իւրոց ընթանայր:

Եւ սակաւ ինչ մնաց զանտառախիտ տեղիսն այն անցանել, բայց յայնմ միջոցի ի սպառիլ ճանապարհին այնորիկ նշանակեցեալ կարգաւորութեամբ, յորժամ հաւասարեցաւ Նաղիբ յանդիման նոյն ծառոյն, որ էր խիտ առ խիտ և ոստալի, ի վերայ որոյ նստէր թշնամին հանդերձ հրացանիւ, ի յառաջնում աւուրք մայիսի ամսոյն յամի 1741, յանկարծակի թռեալ գընտակ մի (գուլլայ), հպելով առ բոյթ ահեակ ձեռին շահին և էանց: Եւ շահ, ի թօթափիլ յական, հայեցաւ առ յաջակողմն անտառին՝ ուստի ձգեցաւ գուլլին, և սրագոյն տեսողութեամբն իւրով ետես ի վերայ ծառոյն զդէմք թշնամւոյն իւրոյ, և իսկոյն ի նոյն բոպպէի անկաւ յերիվարէն ի վերայ երկրի և եղև սուտ մեռեալ:

Իսկ թշնամին ձգումն հրացանին նպատակեալ էր ի կուրծքս նորին, և հարկանումն համարեալ էր նա կատարեալ գոլ ի ձեռաց իւրոց՝ էջ ի ծառէն և սկսաւ անտառաւն ընդ այն շուտափոյթ աճապարմամբ ընթանալով հեռանալ:

Իսկ բոլոր կանայք շահին ի վերայ ժողովեալ՝ ամենեքեան լալով ողբային և կոծելով զաղաղակ բարձին, և գունդն զօրաց,

որք ի յետուստ կողմէն էին, ընդ յորս էր և զՌզա-Ղուլի Միրզա, ի լսել ձայնի աղաղակին՝ իսկոյն անյապաղ ընդ իշխանութեան իւրոյ զօրօքն ի վերայ վազեալ հասանեն: Որդին տեսեալ զհայրն իւր անկեալ ի վերայ երկրի, և շուրջ զնովաւ բազմութիւն կանանց աղաղակողաց՝ յարձակեաց ի վերայ համարձակապէս և յետս քարշեաց զնոսա (որում ոչ երբէք ի կենդանութեան իւրում հրամայեցեալ էր մօտաւորիլ հարճիցն), զի թերևս հաւաստապէս տեսցէ աչօք իւրովք զկորուստ հօր իւրոյ: Իսկ Նաղիբ ի լսելն միայն զձայն դոփման ոտիցն երիվարաց և ի ձայնից վազեցողաց առ նա՝ եբաց զաչս իւր և ասաց մեծաձայն. «Մի՛ երկնչիք», և յայտնեաց՝ նշանակելով առ որդին և ասաց. «Թշնամին ի յանտառէն ձգեաց ի վերայ իմ զհրացան», զի աճապարեալ հասանիցէ ըմբռնել զնա՝ առեալ ընդ իւր ի յօգնութիւն (57բ) զինուորս յառաջադէմ հեծելագօրաց:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա նոյն ժամայն ընդ մասամբք ինչ զօրօքն յարձակեցաւ ի յանտառն՝ ցրուելով զնոսա ընդ ամենայն տեղիս, իբր գտանել զմարդասպանն: Բայց ապա իմացան, զի Ռզա-Ղուլի Միրզա այնպիսի արշաւամբքն, ինքն մնալով ի խիստս անտառին, թաքոյց զհարածճիկն զայն:

Իսկ շահ Նաղիբ կոչեաց զմիւսս գունդն յառաջադէմ զօրացն և յուսադրեաց զնոսա, պատեաց զմատն վիրաւորեալ, նստաւ ի ձի և հէասա առ նշանակեալ տեղին իւրայնովքն ամենայնիւ: Եւ բժիշկն պալատական ապահով արար զարքայն իւր, թէ՛ ի վիրացն այն ո՛չ յետևի զվնաս ինչ, քանզի միայն եզրատեալ էր, և եղ ի վերայ սպեղանի, սակայն Նաղիբ, ընդդէմ սովորութեան իւրոյ, աւուրս ինչ ո՛չ ել ի դատողական և կառավարական տաղավար:

Եւ ապա փութով եկն ևս Ռզա-Ղուլի Միրզա ի յանտառէ անտի և յայտնեաց ծնողին իւրոյ, թէ՛ ամենայն ջանիւք որոնեցաք ի յանանցանելի անտառսն այն, բայց չարածճիկն զայն գտանել ոչ կարացաք, վասն այսորիկ ժամանակ ինչ լոռեաց շահ՝ ոչ առնելով հետազօտութիւն ընաւ սակս այնպիսի չա-

րութեան, այլ զորդին իւր, որ յայնժամ առանձնացեալ բնակէր ի հարճնարանին, կոչէր շահ առաջի իւր բազում անգամ, որ և ի յետեցելոցս կարէ նկատիլ, զի արքայն հմտագոյն սակս նշմարելոյ և վերահասու լինելոյ ի դիմաց և ի բանից նորա՝ կամեցաւ յոյժ ողորմածաբար և յատուկ քաղցրութեամբ ընդ որդին իւր խօսակցել:

Եւ յորժամ շահ Նազիր սկսաւ ըստ առաջնոյ սովորութեան ներկայանալ առաջի բազմութեան, յայնժամ սկսան յայտնի լինիլ ամբաստանիչք՝ սակս պատահեալ չարութեան: Իսկ նա թոյլ ետ նախ զամենեցուն զալ առաջի իւր, և ապա հասու եղեալ ստութեանց մատնչացն՝ արձակեաց զնոսա թարց պատժոց, ոչ ևս ընդունելով զայնպիսի զրպարտութիւնք: Բայց միանգամայն երկբայելիք եղեն նմա ըստ ենթադատութեան մտաց իւրոց զերկուս զլիսաւոր զօրապետս, որք էին բացակացք յինքենէ ի հեռաւոր տեղիս: Հրամայեաց հրովարտակօք ենթ պահապանաց պահել զնոսա, և ապա հրամայեաց կոչել թարց յամեցողութեան զպատկերահանս (58ա) հմուտս ի Ասպահանայ, զի եկեսցեն առ դուռն արքունի:

Եւ Նազիր, կառավարելով զիշխանութիւնն բարեյաջող կենցաղավարութեամբ և սակս բարեգուտ պատճառաց և խորհրդոց, հրամանաւ իւրով զժողովեալսն յամենայն տէրութեան իւրոյ զանազան արսն աստիճանաւորք արձակեաց ամենեցունց դառնալ իւրաքանչիւր ոք ի տեղիս իւրեանց:

Եւ ինքն մօտաւորեալ առ Թէհրան՝ բարեգոյն համարեաց անուամբ յայտնելով ցուցանել զճնողական գութս, իբրու թէ ոչ կամի առ դժուարագնաց ճանապարհորդութեանն հարկադրելով աշխատ առնել զորդին իւր զՌզա-Ղուլի Միրզա, և թողուլ զնա ի նոյն քաղաքով՝ առ ի հանգիստ բնակութեան նորա, թարց յանձնելոյ նմա զգործս արքունական պարտականութեանց՝ հրամայեաց նմա զբօսնուլ անդ, բնակելով ի զուարճալի տեղիս: Եւ սակս ծախից և ապրելեաց նորա ընդ սպասաւորս և պաշտօնեայս իւր և կարգաւորեաց զրամս բաւական չափով

ստանալ նմա ի մտիցն Թէհրանայ, և ըստ երեւելի կամեցողութեան շահին, իբր սակս առաւել հաւատարմաբար պահպանութեան զառողջութիւնն որդւոյն, տուան նմա զերկուս պալատական ներքինիս շահի, բայց ըստ ծածուկ դիտաւորութեան նորա՝ կացուցեալ էր զնոսա ընդ նմա, զի վերատեսուչ լինիցին նմա, և անքուն ախամբ զննեսցեն և իմասցեն՝ զուցէ Ռզա-Ղուլի Միրզա խօսիցէ երբէք բանս ինչ սակս պատահեալ փորձութեան շահին: Եւ բացի ներքինեացն կարգաւորեցին ընդ նմա նաևս պատուաւոր այր ոմն՝ ատենադպիր Միրզա Ահմէդ անուն, ի սպասաւորութիւն Ռզա-Ղուլի Միրզին վասն գրապրութեան գործոց:

Եւ այսպէս որդին մնաց ի Թէհրան, և հայրն ըստ առեալ կամեցողութեան իւրոյ՝ երկարեաց զճանապարհորդութիւն իւր առ Դաղստան⁶⁹: Յայնմ ժամանակի եկին արշաւանօք, ըստ կերպի սուրհանդակի, պատկերահանքն ի բանակ շահին: Նազիր ո՛չ վաստակեալ և ո՛չ ձանձրացեալ յանդադար ճանապարհորդութեանցն և աշխատանացն ի կառաւարութենէ թագաւորութեան գործոցն (58բ) անձամբ անձին իւրով բաժանեաց նաև զժամանակ ի վերայ նախիշեցեալ գործոցն՝ ասելով պատկերահանացն մի [ը]ստ միողէ զնշանակութիւն և զձեակերպութիւնս դիմաց չարածճիկ հրացանակրիճին:

Արդ, ոչ գոյ սակս յայսմ հակասութիւն, զի պատկերահանքն պարսից թէպէտ դէմք մարդոյ երանգօք ի բնական նմանութեան կենդանութիւն տալ ոչ են հմուտք, սակայն նմանութիւնն պատկերակերպել կարօղք են: Արդ, նկարեցեալ եղեն պատկերք մարդասպանին չափաւոր համարաւ և զամենայն զնոսին իւրաքանչիւրն հրովարտակաւ շահ Նազիրայ ի տեղիս տեղիս ընդ ամենայն գաւառ ձեռամբ յատուկ արանց առաքեցեալք եղեն սաստիկ հրամանաւ, որպէսզի իւրաքանչիւր կառավարիչ յիւրում իշխանութեան ամենայն կերպիւ հետեւելով

⁶⁹ Նազիր շահը Դաղստան է արշավել 35 հազարանոց բանակով (տե՛ս Յանուէ, 624. աշխ., էջ 146):

որոնից է և գտանից է զայր ըստ նմանութեան առաքեցեալ պատկերին, և յորում ժամու գտանեցեալ լինի՝ զնա երկաթակապ շղթայիւք ենթ սաստիկ պահապանաց թարց յամեցողութեան առաքեսցեն ի բանակ իւր:

Յետ այսորիկ, առաջիկայ ժամանեալ ամսոյ նոյն յամին, առ ճանապարհորդութեամբն ի վերայ Դաղստանայ՝ յայտնեցեալք գտանեցան ի բանակի անդ զիրս ընկեցեալս յերկիր, ասելով ի նոցին՝ վասն սիրոյ երկոտասան պատգամաւորաց, ելելոց ի ցեղէն Մահմէդի, սակս ողջակիզելոյ պատրաստեցեալ է երկոտասան գուլլայս՝ առ ի ջնջել զկեանս հալածիչ և չարչարողին մերոյ: Բայց ահարկու հնչումն և ոչ սակաւ իւրք ինչ խռովեցոյց զանձն մեծի առնս ի դարի իւրում, մանաւանդ՝ ոչ վրդովեաց բարձրաթուիչ միտք նորա, քանզի նա զայն ունայնական բանսն ոչինչ համարեաց և ոչ եմոյծ ի լսելիս իւր, այլ ի ճանապարհորդութեան իւրում զուարճանայր թագաւորութեամբն Պարսից և յաղթութեամբ յերկրին Հնդկաց, քանզի իմաստութեամբ կառավարեաց, մեղաւորս պատժեաց զանազան մահուամբ, զարժանաւորս պարգևատրեաց զօրս իւր ըստ կարգին պահեաց, միով բանիւ՝ ասացից Նադիր ըստ սովորութեան լեզուին արաբացւոց ընդիր ընդիր գործս գործեաց:

(59ա) Եւ յամսեանն հոգտեմբերի յամի 1741, յորժամ շահ Նադիր ըստ անբախտութեան իւրոյ յաղթեցաւ առ լերամբն Դաղստանու⁷⁰, հարկաւորեալ եղև հուպ առ կողմամբն Դարբանդու մնալ և ձմերնանալ ի յերկրի լեռնական իշխանին Իսմու⁷¹, մօտ ծովեզերն Կասպիական:

Յայ[ն]մ ժամանակին բերին սաստիկ կապանօք զչարածճիկն այն մարդասպան մերձ ի մէջ գիշերոյ, որ ըմբռնեալ էին զնա առ սահմանաւն Բուխարու յերկրին, որ և իսկոյն ի նոյն

ժամու սակս նորա ի հարճնարանն շահին իմացուցին նմա: Իսկ Նադիր իսկոյն հրամայեաց (թէպէտ ոչ էր սովորական ժամանակ) ի նշան ուրախութեան իւրոյ փողս հարկանել և ընդ ամենայն բանակն պատգամաւորօք իմատարօք ցուցանել, թէ չարակամ թշնամին կենաց իւրոյ գտանեցեալ է, որում և հրամայեաց մինչև ցգալ աւուր պահել ենթ սաստիկ պահապանութեամբ պահնորդաց:

Եւ ընդ առաւօտն շահն ել և եմուտ ի դատողական տաղաւար, և նոյն ժամայն հրամայեաց բերել առաջի իւր զմարդասպանն՝ ի յատեան ներկայութեանն հասարակական առաջիկայից իւրոց, արանց աստիճանաւորաց մինչև ցերեք հարիւր անձանց, և կոչեաց զնա առ մերձ և ասաց ի ձայն.

«Մեք երդնումք քեզ ամենաբարձր Աստուծով և զրովն Ղօռանաւ, զի զքեզ ոչ սպանանեմք, ասա՛ մեզ զճշմարիտն, ո՛վ ամբարիշտ, ցած և չնչին արարած, որթն և ոստան սարդի, ո՛ր՝ պէս յանդգնեցար դու խորհել զչարութիւն և գործել զանօրէնութիւն ի վերայ կամեցողութեամբն բարձրելոյն յԱստուծոյ կարգեցեալ մեզ մեծ թագաւորիս կամ, ո՛վ դու որդի կորստեան, ոչ ի միտ առեր, զի ամենաբարձր Արարիչն անյայտաբար պահպանէ զընդրեալն իւր ամենազօր աջովն իւրով»:

Եւ թշնամին երկիրպագանելով՝ պատասխանեաց նմա.

«Մեծ տէր և հզօր թագաւոր, կացցէ առողջ յաւիտեան, կեանք և մահ իմ կանխին այժմս ի կամաց քոց, ահա ճանաչեմ (59բ) ես, զի ամենաբարձրն Աստուած զքեզ՝ սիրեցեալդ իւր պահպանէ և ողորմի, եթէ ես ի ժամանակին յայնմիկ գիտացեալ էի, որ դու անկեալ յերիվարէն ի վերայ երկրի կենդանի էիր, ես զքեզ և ի յայնմ տեղուջ գործս փութացուցանել կարէի, քանզի առ յիս ունէի ի պատրաստի զգուլլայս բազում, իսկ այժմ կամք քոյ է ընդ իս»:

Եւ լուեալ շահ Նադիր զբանս զայս՝ կոչեաց առաջիկայք իւր մշտապէս եղեալ դահիճքն, և հրամայեաց առաջի իւր կուրացուցանել զչարակամն, որ և կատարեցաւ իսկոյն: Եւ յանձ-

⁷⁰ Դաղստանում Նադիր շահը կորցնում է իր գործի 2/3-ը և ձիերի մեծ մասը (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 215):

⁷¹ Իսմի – Դաղստանի ֆեոդալներից (նրա մասին տե՛ս Աբրահամյան Ա., Սի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-առևտրական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 29, 181):

նեաց զնա առ ոմն երևելի և հաւատարիմ առն պահել զնա, և շնորհեաց նմա ի նոյն ժամու և բաւականութիւն ապրելոյ նորա յիսուն թուման: Նաև իսկոյն հրամայեաց առաքել ի Հերաթ՝ առ երէց որդին իւր համբաւս զայս ուրախութեան, այսինքն՝ ըմբռնելոյ մարդասպանին:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա ի ստանալ զլուրս զայս, առ ի ցուցանել արտաքուսդ իբր ուրախութիւն իւր՝ շնորհեաց առաքեցելոյն զխիւլայս հարուստս և բոլոր հանդերձիւք յոտից մինչև ցլուրս զգեցոյց նմա (քանզի առ պարսիկս սովորութիւն է սակս մեծի ուրախական համբաւոց), և անդէն յուղարկեաց զառաքեալն հանդերձ գրով, ի յորում առ ծնօղն իւր ի խորոց սրտէ զուրախութենէն մասնաւորին իւր ընդարձակ վկայութեամբ յայտն արար:

Եւ յետ այսու, ի հանդարտիլ ցաւոյն և առողջանալ աչաց չարակամին, Նադիր ծածկաբար ի ժամս գիշերային առնոյր զնա և կացուցանէր առաջի իւր, և անձամբ անձին առանձին հարցափորձ առնէր զնա, թէ ում ուսուցմամբն յանդգնեցաւ նա սողնուլ առ այնպիս[ի] գործ անօրէնութեան: Իսկ ապստամբն թարց ամենայնի դիմադարձութեան և բացասութեան, առանց սղալանաց, ստուգապէս մի ըստ միոջէ պատմեաց զճըմարիտն՝ ասելով, թէ՝ երէց որդին քոյոյ մեծութեան Ռզա-Ղուլի Միրզա և սարգար Լօթֆալի խանն սակս այն արարողութեան հաւանեցուցին զիս, վասն որոյ նոքա ընդ իս երեքեանս միայն դաշինս եղինք, ևս (60ա) թէ հազարապետն Մահմէ[դ] բէգ եբեր զիս առ Ռզա-Ղուլի Միրզա, և թէ՝ ետես նա, զի ես հրացանաւ որպիսի ամբողջ ձգելով հարի առ նպատակն և այլն:

Հնարագէտն Նադիր յորժամ իմացաւ զհաստատութիւն խորհրդոցն չարակամաց անձին անձին իւրոյ, այնքան համբերութիւն ստացաւ ի հրաբորբոք և ընդարձակ բարկութեան իւրում, մինչ զի սակաւ իւրք կերպիւ նշան ևս ոչ եցոյց առ ի վրէժխնդրութեան այնց գործոց մինչև ցպատէհ և յարմար ժա-



Նադիր շահ Աֆշար
(1736-1747)



Թահմագ-Ղուլի խան
(ապագա Նադիր շահը)



Նադիր շահ
(գործ՝ անհայտ նկարչի)



Նադիր շահ




Նադիր շահ Աֆշար



Նադիր շահը Կառնալի ճակատամարտում



Նադիր շահ
(սկարիչ՝ Միրզա Ջանի)



Հերաթի արշավանքը



Կառնալի ճակատամարտը
(24 փետրվարի 1739 թ.)



Ճակատամարտի տեսարան Միրզա Մեհդի խան Աստարաբադիի
«Թարիխ-ե Նադերի» աշխատության ձեռագրից




Մանրանկար Միրզա Մեհդի խան Աստարաբադիի
«Թարիխ-ե Նադերի» աշխատության ձեռագրից



Նադիր շահն իր որդիների հետ




Նադիր շահն իր որդու հետ (հատված նկարից)



Նադիր շահն իր թիկնապահներով



Պարսկական հեծելազոր



Նադիր շահի դրոշմ



Նադիր շահի թագը



Նադիր շահի հատած դրամներից



Նադիր շահի դիմանկարը



Նադիր շահի մանրանկարը



Աղիլ շահ (1747-1748)



Ահմեդ շահ Դուրրանի (Նադիր շահի զորավարներից, Աֆղանստանի շահ 1747-1773 թթ.)



Նադիր շահ

մանակի իւրում, այլ մանաւանդ ևս առաւել ցուցանէր ի պալատի իւրում եղեալ աներորդւոյն իւրոյ Լօթֆալի խանին անփոխարկելի սէր ողորմածութեանս: Եւ այսպէս, յաւել քան դամիսս վեց յաղազս այսոց գործոց կային բոլորովին ի խորանին լռութեան:

Եւ յամիսս ամառնային յամի 1742 շահ Նադիր ինքնին հետամուտ լինէր լեռնական արանց ճանապարհորդութեամբն ի տեղիսն և իջևանսն թշնամեաց՝ յանկարծակի հրամայեաց կոչել առ ինքն զհազարապետն Մահմէդ բէգ, և առաջակայ հետևակին իւրոյ հրամայեաց խեղդել զնա: Իսկ նա ունեցաւ ժամանակ միայն բոպէ մի խնդրել զողորմութիւնն, որ և խնդրեաց, սակայն Նադիր ասաց զբանս զայս.

«Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին ևս խնայիցէաք»:

Եւ հազարապետն իսկոյն զրկեցեալ եղև ի կենաց, և ի յայս պատահանս մեծամեծքն պարսից խորին մտածամամբ մեծացուցանէն զասացեալ բանսն շահին: Սկսան կարծիս անկանիլ վասն Ռզա-Ղուլի Միրզին՝ սակս խորհրոյ սպանութեան հօրն և թագաւորին իւրոյ: Բայց Լօթֆալի խան վարէր զինքն խոհեմութեամբ և կեղծաւորութեամբ, այնպէս՝ իբր թէ առ այն գործն ինքն ամենևին ոչ իցէր մասնակից երբէք:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա, մնալով ի Թէհրան, զբօսնոյր փափկակեցութեամբ ի զուարճալի և ուրախարար տեղիսն արտաքոյ քաղաքին, և զերկոսին ներքինիսն, որք տուեալք (60բ) էին նմա ի ծնօղէն իւրմէ՝ մեռոյց զնոսա: Աստ մարթէ իմանալ իհարկէ վասն այնորիկ, զի իմացեալ եմիտ էառ, զի զնոսին ոչ եթէ վասն պահպանութեան առողջութեան նորա էին գարքեալք, այլ վասն փորձառութեան և վերահասութեան էին զնոսս յարկացեալք ընդ նմա:

Եւ շահ Նադիր ի յիսն ներկայ ամռան առաքեաց հրովարտակ սիրալիր ողորմութեան որպէս առ երէց որդին, նմանապէս և առ միւս որդիսն իւր, նաև՝ առ յատկապէս ջերմ սի-

ըով սիրեցեալ դեռահասակ թոռն իւր Շա[հ]ուլի Միրզա⁷², որ ծնեալ էր ի կնոջէ Ռզա-Ղուլի Միրզին՝ արքայազնուհէ Սօֆիականէ, կոչել զնոսա առ ինքն այսու օրինակաւ, թէ՛ որովհետեւ իւրոյ մեծութիւնն շրջի անդրէն ի հեռաւոր տեղիս՝ յաղագս հնազանդեցուցանելոյ զթշնամիսն իւր, իսկ վասն բազմաժամանակեալ[ոյ] կարօտութեան իւրոյ զերեսս որդւոց իւրոց փափակմամբ տեսանել կամի: Այժմ սրտի մտօք ցանկայ լցուցանել զկամեցողութիւն իւր և մխիթարիլ, և վասն այսորիկ բարեմտաբար հրամայէ միջակ որդւոյն Նէսիրօլլահ Միրզէ և կրտսեր որդւոյն Իմամ-Ղուլի Միրզէ և սիրելի պատուական թոռան իւրոյ Շա[հ]ուլի Միրզէ, զի ամենեքեան ի միասին ելանիցեն ի Մաշադայ և գալով ընդ յարմար ճանապարհաւ՝ զնասցեն ի Թէհրան, ուր միաւորեացի ընդ սիրելի Ռզա-Ղուլի Միրզին, և ամենեքեան ի միասին եկեսցեն ի դուռն իւրոյ մեծութեան:

Եւ այսպիսի կարգաւորութեամբ զերեք որդիսն շահ Նազիրայ և զթոռն նորա չուեցին ի Թէհրանայ և սկսան գալ: Բայց, Ռզա-Ղուլի Միրզա ի ճանապարհի անդ զչարեցաւ բարկութեամբ ի վերայ ատենադպրին, և ոչ ապրոյր նա ի մահուանէ, եթէ ոչ թազէիցէր ի նմանէ, և ի յայտնիլ նորա առ թագաւորն իւր՝ ասաց ցնա, թէ՛ ի որդւոյ քոյին մեծութեան զերկուներքինիսն կորուսեալ եղեն, և կամէր զիս ևս սպանանել:

⁷² Շահուլի Միրզա – հանդիսանում էր երկու դինաստիաների՝ Սեֆյան և Աֆշար շահերի թոռը: 1749 թ. գահընկեց է արել Իբրահիմ շահին: 1749 թ. ղեկտնութիւն խորասանում Շահուլիի դեմ խռովություն է բարձրացրել Մեշեդ քաղաքի շիա հոգևորականությունը, որը նրան հայտարարել է այլակրոն ու Նադիրի քաղաքականության հետևորդ, և առաջ քաշել գահի իր թեկնածուին՝ միրզա Սեյիդ Մուհամմադին (Միր-Սեյիդ), որը տապալել է Շահուլիսին և կուրացրել: Սակայն, 1750 թ. հունվարի 14-ին գորավար Յուսուֆ Ալի խան Ջալաիրին իր հերթին գահընկեց է արել նրան և գահի վրա վերականգնել Շահուլիսին: Վերջինիս կառավարումը խորասանում ընդմիջումներով շարունակվել է մինչև 1796 թ.: 1754 և 1770 թթ. նա ստիպված էր իրեն ճանաչել որպես Աֆղանստանի Ահմեդ շահ Դուրրանիի վասալ, իսկ 1760-ական թթ. կեսերից իշխանությունը բաժանում էր իր որդիների՝ Նադիր Միրզայի և Նասերոլլահ Միրզայի հետ: Վախճանվել է 1796 թ. (տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 385-387, Шабани Р., Краткая история Ирана, Санкт-Петербург, 2008, с. 209):

Եւ յամսեանն հոգտեմբերի 1742 յամին եկին թագաւորազուներն ամենեքեան ի Դարբանդ և կալան բնակութիւնք ի պալատին արքունի աւուրս (61ա) երիս վասն զանչելոյ, և ապա զնացին ի բանակ շահին, քանզի յայնմ ժամանակի էր շահ ենթ Բաշու⁷³ գեօղին՝ բացատուութեամբ ի քաղաքէն քառասուն վերստ, զի սակս ձմերնանալոյ ընդ զօրսն իւր անդ ժողովեալք էին:

Եւ ըստ հրովարտակի շահին, վասն զնալոյ նոցին Դարբանդոյ մինչև ցբանակն, նշանակեցեալ էր նոցա տեղի երեկօթս առնել առ կիսոյ ճանապարհաւ՝ առընթեր Բաշուղամ գետով, և յորժամ եկին նոքա անդ և մտին ի տաղավար՝ սակս նոցա պատրաստեալ, յայնժամ եկն առ նոսա փութով էջիկաղայ⁷⁴ մին՝ ընդ հրովարտակի շահին, յորում հրամանէր, զի միջակ և կրտսեր որդիք և զթոռն Շա[հ]ուլի Միրզայ զնասցեն ի պալատն տաղավարական, և Ռզա-Ղուլի Միրզի մնալ, զի ի միուսում աւուր զնասցէ անդ:

Եւ ի մօտանալ նոյն երեք անձանց առ բանակն՝ ընդառաջ ելին նոցա պալատական աստիճանաւորքն հանդերձ հանդէսիւք, և ընկալաւ շահ զերկու որդիսն և զթոռն իւր յոյժ սիրով և ողորմածութեամբ, և արժանաւորեաց՝ հրամայելով նոցա համբուրել զքղանցս պարեգօտին իւրոյ:

Եւ միւսում աւուր եկն և զերէց որդին՝ Ռզա-Ղուլի Միրզա, որում ամենեկն պատիւ ինչ ոչ ետուն, և եմուտ նա ի գաւիթն պահնորդաց տաղավարին, որ կայր յանդիման դատաստանական տաղավարին, և էջ յերիվարէն և մերկեաց յինքենէ զթուրն և զաղեղն հանդերձ նետիւքն (քանզի ըստ սովորութեան պարսից առաջի երեսաց արքայի սպառազինեալ և ընդ գօտի ածեալ սրով ոչ մտանեն):

⁷³ Բաշու – գյուղ Դերբենդի հյուսիսային կողմում (տե՛ս Բարխուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 42):

⁷⁴ Էջիկաղայ – Սեֆյան Իրանի արքունի պաշտոնյաներից էր, պալատի արաբողապետը:

Յայնժամ մատուցեալ ազդեցին շահին յաղագս գալստեան նորա, և նա հրամայեաց թողուլ զնա ընդառաջ նորա, և Ռզա-Ղուլի Միրզա ընդ առաջնորդութեամբ էջիկաղային՝ հանդերձ զօրականօք, եմուտ յետկոյս վչեղէն վարագուրին, այսինքն՝ արգելանոցին, երկիր եպագ արքային և ծնօղին իւրոյ, և եկաց հեռագոյն, քանզի թարց հրամանի ոչ ոք իշխէ մօտաւորիլ նմա:

Եւ հայեցեալ Նաղիր ի վերայ որդւոյն՝ ետես զսուր կապեալ ըստ սովորութեան ի գօտուջ նորա, որ էր խանջալն, գոչեաց՝ ասելով ահարկու (61բ) ձայնիւ:

«Բարձէ՛ք ի դմանէ զզէնն սրոյ»:

Եւ ընդդէմ նմին Ռզա-Ղուլի Միրզա պատասխանեաց խրոխտանօք, թէ՛ ոչ ունի ի վերայ իւր սպառազէնս ինչ, և առեալ յինքենէ զխանջալն կամէր ձգել զերկիր, բայց էջիկաղայն իսկոյն յափշտակեաց զայն ի ձեռաց նորա:

Եւ շահ, ասելով Ռզա-Ղուլի Միրզա՝ յիմար, հրամայեաց դնել ի վերայ նորա զկոճղ և ենթ պահապանաց պահել զնա ի բանդի, սակայն ի մէջ տաղաՎարի՝ մօտ առ կառավարական տաղաՎարին:

Եւ ի անցանիլ աւուրս ինչ՝ առաքեաց Նաղիր զերկուս անուանի սիրելիսն իւր, այսինքն՝ զմօլլաբաշին⁷⁵ և զմիրզա Զաքի⁷⁶ առ որդին իւր յորդորական խրատիւք, զի նա բարեյօժար կամօք սակս չարահնար յանցանաց իւրոց թերևս մեղա՛ գոչիցէ: Իսկ Ռզա-Ղուլի Միրզա ընդդէմ սմին այլևայլ ունայն բանս բարբառելով տփգոհեաց՝ ասելով, իբր ոչ եթէ ինքն ի վերայ հօր իւրոյ, այլ թէ հայրն ի վերայ նորա իցէ խորհեալ զչար՝ կարգաւորելով ի վերայ իմ զերկու ներքինիս հանդերձ

հրամանաւ, զի նոքա զիս դեղակուր առնիցէին, վասն որոյ և ես սպանի զնոսա: Նաև բամբասելով զհայր և զթագաւորն իւր՝ ասէր, թէ՛ հայր իմ իզուր և ի ունայն տեղի ի լեռնային տեղիսն զօրսն չարչարէ, անսուաղութեամբ բազումս մեռուցանէ և իզուր բազում մարդիկս կորուսանէ, եթէ նա իսկապէս թագաւորութիւնս կառավարիցէր, ուրեմն զանազան արդիւնարար գործս արտադրել կարէր, և երկիրս մեր յանդորր խաղաղութեամբ մնալ կարէր:

Եւ պատգամաւոր յորդորիչքն, ըստ բարեկամեցողութեան իւրեանց, որքան կարէր ջանացին խոնարհեցուցանել զՌզա-Ղուլի Միրզա առ իսկագոյն ճանաչումն յանցանաց իւրոց և զղջումն սրտի մտօք, որպէսզի այնու հնարիւք գտանել զչաւիղս՝ առ ի բառնալ զբարկութիւն շահին և ամէլ յողորմութիւն, սակայն սնեալն կողապինդ գոռոզութեամբ և հպարտութեամբ թագաւորազն Ռզա-Ղուլի Միրզա ոչ կարացին հաւանեցուցանել:

Եւ ապա հարկաւորք եղեն զտրտնջողական բանսն նորա զստուկապէսն յայտնի առնել շահին: Իսկ շահ Նաղիր ցասումնալի (62ա) բարկութեամբ վառեալ եղև, և էառ զՌզա-Ղուլի Միրզա կապանօք և պահնորդօք առաջի իւր, և սաստիկ բարկութեամբ ասաց.

«Ո՛վ դու անմիտ և անզգամ, այդ որպիսի անլուր և անծանօթ բանս պողաբերէս ի լեզուէ քումմէ, զի՞նչ մեծագոյն արարած իցես դու, զի առ ի տեղի բառնալոյ զկեանս քոյ՝ մեք, գոլով մեծագոյն արքայ, կամեցաք ծածկաբար սակայն գարշելի հնարս ի գիր առնուլ վասն փրկութեան քո, բայց դու, ո՛վ եղկելի արարած, յԱստուծոյ տուեալ մեզ իշխանութիւնն արհամարհե՛ս: Իսկ ա՛րդ, ահա այժմ զշուռնչ քո ի քէն ի բաց ելանիցէ»:

Եւ կոչեաց զղահիճս, հրամայել կամէր կուրացուցանել զնա (անդէն ստորանկեալ էր անարգաբար Ռզա-Ղուլի Միրզա ի վերայ երկրի), բայց հայեցեալ ի վերայ նորա՝ մորմոքեաց

⁷⁵ Մօլլաբաշի – մահմեդական հոգևորականութեան աստիճանակարգում բարձրագույն պաշտոնն էր՝ ստեղծված շահ Սուլթան Զուսեյինի իշխանության տարիներին (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. III, կազմեց Բ. Կոստիկյանը, Ե., 2005, էջ 195):

⁷⁶ Միրզա Զաքին 1743 թ. եղել է Նաղիր շահի դեսպանը Բաղդադի Ահմեդ փաշայի մոտ (տե՛ս Գանուե, Գշվ. աշխ., էջ 155):

զսիրտ հայրական, արգելեաց աստ ծնօղն մերձենալ դահճացն առ յաչս որդւոյն իւրոյ: Ապա հրամայեաց փայտիւ հարկանել մերկաբաց ոտիցն, և Ռդա-Ղուլի Միրզա փայտացեալ ասաց.

«Մի՞թէ մեծամեծ թագաւորք այդպէս վարիցեն ընդ որդիսն իւրեանց»:

Եւ լուաւ պատասխանի ի հօրէն իւրմէ, երկրորդելով զնոյնն, թէ՛ զանպիտանդ զայդ, և համբերեաց նա մինչև ցյիսուն գանից, և յետ այսու երկաթի ծանու կապանօք տարեալ եղև յիւր տաղաՎար:

Եւ յետ այսու հայեցարանէ իսկոյն հրամայեաց շահ կարգել ընդհանրական դատաստան ի վերայ Ռդա-Ղուլի Միրզին և դատել զնա ըստ օրինաց: Եւ ի բանակի անդ եղեալ աստիճանաւորաց բարձրագունից, միջակաց և ցածագունից ժողովեցան յաւել քան զարս հարիւր, և վասն նոցա իւրաքանչիւրոց յատուկ յատուկ նամադ⁷⁷ առ արգելանոցի անդ՝ յանդիման կառավարական կամ դատողական տաղաՎարին եղեալք եղեն: Եւ բաժանեցան դատաւորքն երիս կարգս աստիճանաց, և յորժամ կարգաւորեալ կառուցաւ յատեան, յայնժամ Նադիր միջնորդութեամբ հոգաբարձուաց՝ մօլլայբաշիւն և միրզայ Զաքիւն, հրամայեաց առաջնորդել (62բ) առ յատեանն զբանս զայսոսիկ.

«Այնպիսի որդի, որ ունիցի կամս նենգութեամբ սպանանել զհայր իւր՝ ոչ պահպանելով ընդհանուր օրէնս և պատիւ աշխարհական առ հայրն պատկանեցեալ, զի՞նչ արժանաւորի նմա»,—հրամայելով ընդ նմին, զի իւրաքանչիւր դասք զվճիռս իւրեանց զրեսցեն որոշակի:

Եւ այսպէս, դասն առաջին՝ զատեալ ի միւս դասից, յորում էր և զԼօթֆալի խան, ամենայնքնն միաձայն զորդին իբրև զթշնամի հայրական կենացն՝ ի մահ, նաևս՝ չարաչար, արժանի գոլ դատապարտեցին:

Երկրորդ դասն ենթագատեաց այսպէս, թէ.

⁷⁷ Նամադ – վերակացու:

«Ամբարիշտ է այնպիսի որդի, որ զբնական պարտականութիւնն իւր ո՛չ հատուցանէ ծնօղին իւրոյ, և անիծեալ է այնպիսի զաւակ, որ յանդգնի առնել զչարութիւն ծնօղին իւրում: Սակայն, ի յազգս մարդկան, ըստ մեծի մասին, հայրք յինքեանց գոյացեալ կեանս մեղաւոր զաւակաց եթէ զրկիցեն ի կենաց, ապա հետևի զգալի դառնութիւն վասն բնական ջերմագոյն սիրոյն, իսկ ա՛րդ պատուիրանազանց որդի թարց պատժոյ թողուլ ոչ է պարտ՝ որդի, որ մառախլապատեալ իցէ լուսաւորութիւն մտաց իւրոց՝ կուրացուցանել արժան է»:

Երրորդ կարգաւորութիւն դասուցն, որ էր գերագոյնն ժողովք, բացին զբերանս իւրեանց՝ ասելով.

«Ո՛վ պարոնայք, աստ բանս գոյ ոչ վասն որդւոյ ռամկաց, այլ վասն որդւոյ թագաւորի. թէպէտ թագաւորն է ինքնակալ և անեզրական իշխան, սակայն ըստ արդար իրաւանց զզաւակ իւր կորուսանել ոչ է պարտ. ըստ մարմնաւոր բնութիւնս լինելութիւն ոչ բարձցի, ըստ հնագոյն օրինաց և կանոնացն պարսից՝ նիւթ և գործիք մահացուցման ո՛չ հասանի երբէք ի վերայ արենակցաց արքայի: Արդ, որովհետև այնպիսի որդի, որ յոյժ մեծագոյն մեղանչեալ իցէ ընդդէմ թագաւորին և ծնօղի իւրում՝ սակայն այնորիկ արժանի է նա պատժոյ լալագին և ողորմելի կացութեան ըստ գործոց իւրոց. առաքել զնա ի յաքսոր այնպիսի տեղի, ուր արքայ կամեսցի, և պահել զնա միայն լոկ հացիւ և սոսկ ջրով՝ ենթ սաստիկ պահապանաց»:

Եւ զայս երեք կերպիւ դատողութեանց վճիռսն մատուցեալ եղև շահին ի ձեռն հոգաբարձուացն՝ մօլլայբաշիւ և միրզա Զաքիւ:

(63ա) Ապա հրամայեաց շահ Նադիր ի ժողովեցելոցն քաղաքական և պատերազմական երկրորդ և երրորդ դասք աստիճանաւորաց արանց արձակել ի բաց, և գլխաւոր զօրապետացն, որ էր առաջին դասուց, կալ և մնալ անմեկնելի ի տաղաՎարի պահապանաց: Նաևս պալատական մեծամեծ աստիճանաւորացն ոչ հեռանալ ուրեք, և ինքն դարձաւ և եմուտ ի հարճնա-

րանն ժամս ոմանս՝ սակս հանգստութեամբ խորհրդածելոյ, յորմէ և ել արտաք[ս] վաղվաղակի յոյժ բա[ր]կութեամբ և ահարկու դիմօք, եմուտ ի դատողական տաղավար, և կոչեաց զէշիկաղայն Մահմադ Ալի խան մերձ առ ինքն, և զծերակուտ դահճապետն Մուղիբ Ալի բէգ, և ետ նոցա պատուէր հրամանի, զի առեալ զդահիճսն զնասցեն ի տաղավարն պահապանաց, նախ ասացեն ցլօթֆալի խան, թէ՛ նա աւերեալ ապականեաց զպատուական պատանին զայն, այսինքն՝ Ռզա-Ղուլի Միրզա, և կուրացուցեն զնա:

Եւ հրամանս զայս կատարեցաւ ի թօթափիլ ական, և կամէր սարդար, զի բացասութեամբ բացայայտնիցէր բանս ինչ առ յականջս շահին, սակայն ոչ եղև նմա թողեալ: Եւ եկեալ էշիկաղայն ընդ դահճապետին՝ կացին յանդիման երեսաց թագաւորին իւրեանց, երկիրպագին և մնային լուութեամբ, թէ՛ զինչ հետեւելոց իցէր յետ կատարման հրամայեցելոյն:

Եւ շահ սակաւիկ մի ի միտ էած, և դարձեալ կոչեաց զնոսա մօտ առ յինքն և հրամայեաց զրկել զերէց որդին իւր ի յաչացն նորին: Եւ նոքա ընթացան վաղվաղակի առ տաղավար Ռզա-Ղուլի Միրզին և յառաջագոյն ասացին նմա, թէ՛ թագաւոր և հայրն քո հրամայեաց կուրացուցանել զքեզ: Իսկ նա ի մտի իւրում հաստատ և հաւաստի հաւատայր և յուսայր զջերմագոյն սէր ծնողին իւրոյ և գիտէր, որ ունէր ընդ ինքեան, վասն որոյ զասացեալն նոցա վարկաւ իբր զոլ սակս ահացուցման միայն: Եւ յանկարծակի յառաջ մատոյց զպարանոց իւր ի նստեալ տեղոյն յայնմիկ և ասաց.

«Ահա՛»:

Եւ յորժամ դահիճքն կալան զնա և ի բաց հանին զմի ակն նորա, յայնժամ թագաւորագն Ռզա-Ղուլի (63թ) Միրզա աղաղակեաց մեծաճայն.

«Ո՛հ հայր, կորեա՛ ես»⁷⁸:

Ի մօտաւորութենէ տաղավարին թէպէտ ճայնս այս ողբաւի էհաս առ լսելիսն Նաղիրայ, սակայն, զի էր օր ցասումնայի բարկութեան նորա, ոչինչ օգնեաց ամենեւին, քանզի և զմիւս ակն ի բաց հանին իսկոյն:

Եւ յայպէս, ի վերջին աւուրսն հոգտեմբերի ամսոյն յամի 1742 անկաւ Ռզա-Ղուլի Միրզա յերկիր ուշաթափեալ: Եւ յորժամ ետես շահ Նաղիր առաջի իւր կացեալք զէշիկաղայն և ծերակուտն դահճաց, որ անլուր երկիրպագանէին նմա, համանգամայն հեղան արտասուս յաչաց նորա, այնքան, որքան կայր կացեալ ի տեղոյն յայնմիկ, և հեղմամբ արտասուօք եմուտ անդի ի պալատն հարճից, ուր հառաչանօք ողբայր դառնապէս: Եւ վիրավորեալ սրտիւ ժամս երիս աւաղելով վշտանայր՝ սակս անպիտան և անմարտի առնելոյ որդւոյ իւրոյ՝ ասելով, թէ՛ ինքն իւրովին կամօք զժառանգն իւր արժանաւոր կառավարօղ և գիտութեան տրօք պարգևեալն և այլ յատուկ շնորհօք լցեալն Ռզա-Ղուլի Միրզա ոչնչացուց:


Ձայս հայրական սիրով սգումն ոչ միայն ի ծածուկ, այլևս ի յայտնի ոչ հանգոյց անձն Նաղիրայ, քանզի նա յետ այսու տրտմալի պատահմանն ոչ ել ի հարճնարանէն աւուրս երիս: Եւ ապա, յառաջին անգամ ի յատեան իւրում յանդիման բազմութեան ժողովրդաց չքմեղս լինելով, ներկայութեան առաջակայիցն իւրոց՝ սակս անցեալ փորձանաւոր պատահմանն, և ի մէջ այլոց բանից ցնծացաւ անձն իւր, և զգալի սէրն, որ ունէր առ Ռզա-Ղուլի Միրզա, տակաւին չևս էր սառնացեալ, որպէս թէ սքանչելի իմն եղև զայս, զի սակս անցեալ դործոցն արարեցելոց ինքնին բարբառեցեալ՝ ասելով.

«Այս զինչ իցէ լինիլ հայր, և ընդ[դ]էմ սմին որպիսի որդիութիւն՝ Ամենաբարձրեալն այսպէս կամեցաւ»:

⁷⁸ Ըստ Ս. Քիշմիշևի աշխատութեան՝ դատավճռի իրականացումից առաջ Ռզա-Ղուլի Միրզան դահիճներին ասում է. «Հայտնէք շահին, որ նա կուրացնում է ոչ թե ինձ, այլ ամբողջ Իրանը» (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 215):

Եւ յետ այսր ամենայնի ծածկաբար ժողովեալն Ռդա-Ղու-
լի Միրզին ի ժամանակի կառավարութեան իւրում դրամսն եր-
կու հարիւր հազար թուման համարեցաւ ի գանձարանն ար-
քունի: Եւ զվերոյ յիշեալ երկու զօրապետսն (64ա) ի պահպա-
նութենէ պահնորդաց որպէս զանմեղս արձակեցեալք եղեն, և
ըստ առաջնոյ գործառ[ն]ութիւնս իւրեանց ողորմածաբար
կարգաւորեցեալք եղեն:

ՎԵՐՋ



ՑԱՆԿԵՐ

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Ձեռագրեր

1. **Բրատիչչեի Վ.**, Բացատրություն անցիցն անցելոց ի մեջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Սիրզին տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ 1742, թարգմանեցեալ ի բարբառս հայոց Յարութին Դաւթնիւ Ջուղայեցւոյ, Սատենադարան, ձեռագիր N 9648, 10889:
2. **Դէլօրիեր**, Առարկութիւն առ պապն Պիոս, թարգմանեալ ի բարբառս հայոց Յարութինէ Դաւթեան Ջուղայեցւոյ Դելանեան, Սատենադարան, ձեռագիր N 23:
3. **Էմին Ֆ.**, Գիրք խոստովանական անուանեալ ճանապարհ փրկութեան, թարգմանեալ Յարութին Դաւթեան Դելանեան Ջուղայեցւոյ, Սատենադարան, ձեռագիր N 7504:
4. **Ժողովածու**, գրիչ՝ Յարութին Դաւթեան Ջուղայեցի, Սատենադարան, ձեռագիր N 8003:
5. **Կանպանեան Գ.**, Երգարան, գրիչ՝ Յարութին Դաւթեան Ջուղայեցի, Սատենադարան, ձեռագիր N 9840:
6. **Կուինտոս Կուրտիոս Ռուփոս**, Գիրք պատմութեանց Սեծին Աղեքսանդրի, թարգմանեցեալ ի բարբառս հայոց Յարութինի Դաւթեան Դիլանեանց Ջուղայեցւոյ, Սատենադարան, ձեռագիր N 2870:
7. **Միխայէլ Ասորի**, Ժամանակաց գրոյցք, գրիչ՝ Յարութին Դաւթեան Ջուղայեցի, Սատենադարան, ձեռագիր N 3517:
8. **Միրզա Մեհդի խան Աստարաբադի**, Թարիխ-ե Նադերի (Պատմութիւն Նադիրի), Սատենադարանի պարսկերէն ձեռագիր N 23:

2. Գրականություն

9. Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953:
10. Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, խմբագրությամբ՝ Լ. Սիմոնովսկայայի և Ֆ. Ացամբայի, Ե., 1973:
11. Բալայան Բ., Նադիր շահի կրոնական և հակաթուրքական քաղաքականությունը, «Իրան-նամե», 1993, N 5, էջ 12-15:
12. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005:
13. Բարխուտարեանց Մ., Աղուամից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999:
14. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Ե., 1961:
15. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973:
16. Կոստիկյան Բ., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Ե., 2004, էջ 356-371:
17. Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հ. 1, խմբագիր՝ Վ. Միքայելյան, Ե., 2003, էջ 277:
18. Հանուէ, Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադիր շահ թագաւորին Պարսից, Սադրաս, 1780:
19. Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Ե., 2007:
20. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, կազմեց Հ. Փափազյանը, պր. II, Ե., 1959:
21. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, կազմեց Բ. Կոստիկյանը, պր. III, Ե., 2005, պր. IV, Ե., 2008:
22. Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984:
23. Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, աշխատասիրությամբ Հ. Սիմոնյանի, Ե., 1989:

24. Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն, «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Բ, էջ 81-112, Գ, 181-212:
25. Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Ե., 1940:
26. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, հ. Ա, Ե., 1965, հ. Բ, Ե., 1970:
27. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեց Ա. Մալխասեանը, հ. Գ, Ե., 2007:
28. Փափազյան Հ., Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, N 2, էջ 72-85:
29. Քյուչուք Արութին, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», 1941, N 1, էջ 101-128:
30. Абрамян Р., Армянские источники XVIII века об Индии, Ե., 1968.
31. Аветисян Г., Генералы-армяне в Российской империи, Ե., 2007.
32. Антонова К., Бонгард-Левин Г., Котовский Г., История Индии, М., 1979.
33. Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, М., 1958.
34. Арунова М., Фирман Надир-шаха, «Советское востоковедение», 1958, N 2, с. 116-119.
35. Ашрафян К., Антифеодальные движения в империи Надир-шаха (1736-1747), «Ученые записки Института востоковедения», М., 1953, том VIII, с. 166-204.
36. Братищев В., Известие о происшедших между шахом Надиром и старшим его сыном Реза-Кулы-Мирзою печальных приключениях в Персии 1741 и 1742 гг., СПб., 1763.
37. Бутков П. Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869.

38. **Иванов М.**, Очерк истории Ирана, М., 1952.
39. **Кишмишев С.**, Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889.
40. **Магомедов Р.**, Разгром войск персидского завоевателя Надир-шаха в горах Дагестана, Махачкала, 1940.
41. **Мухаммад-Казим**, Поход Надир-шаха в Индию. Перевод, предисловие и примечания П. Петрова, М., 1961.
42. **Нерсисян М.**, Отечественная война 1812 года и народы Кавказа, Е., 1965.
43. **Паниккар К.**, Очерк истории Индии, М., 1961.
44. **Синха Н., Банерджи А.**, История Индии, М., 1954.
45. **Тер-Аветисян С.**, Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.
46. **Тер-Мкртичян Л.**, Положение армянского народа под игом Надир-шаха, «Известия АН Армянской ССР», 1956, N 10, с. 91-98.
47. **Тер-Мкртичян Л.**, Армения под властью Надир-шаха, М., 1963.
48. **Шабани Р.**, Краткая история Ирана, Санкт-Петербург, 2008.
49. **Шеманский А.**, Надир-шах и его походы в Афганистан, Индию, Бухару, Хиву, Туркмению, «Средняя Азия», Ташкент, 1911, кн. VIII, IX.
50. **Эмин Ф.**, Путь ко спасению или разные набожные размышления, СПб., 1780.
51. Энциклопедический словарь, издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, том IV^A, СПб., 1891.
52. **Hanway Jonas**, An historical account of the British trade over the Caspian sea, vol. I-II, London, 1754.
53. The Cambridge History of Iran, vol. 7. From Nadir Shah to the Islamic Republic, edited by **P. Avery, G. Hambly and C. Melville**, Cambridge University Press, Cambridge, 1991.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արքա III, 11, 23, 27
- Ադիլ շահ, 17
- Ալեխանդր Մակեդոնացի, 8, 9, 17
- Ահմեդ շահ Դուրրանի, 50
- Ահմեդ փաշա, 52
- Աբբաս, 13
- Աֆշարներ, 50
- Բարուր, 25
- Բերթոլդյան Պ., 8
- Բրատիշչև Վ., 1, 2, 5, 6, 8, 9, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 22
- Դեյլանով (Դելանյան) Դավիթ, 7, 10
- Դյուլորիե, 6, 9
- Էմին Ֆետոհուր, 9
- Թահմասպ II, 11, 13, 23, 24, 26, 27, 40, 41
- Իբրահիմ խան, 15, 24, 40
- Իբրահիմ շահ, 17, 50
- Իմամ Դուլի Միրզա, 50
- Իսմայիլ I, 26
- Իսմայիլ, 23
- Լորֆալի խան, 14, 34, 35, 36, 38, 49, 54, 56
- Կանպանյան Գ., 7
- Կեղծ-Կալիսթենես, 8
- Կոստիկյան Ք., 11
- Կուրտիոս Ռոսիոս, 9
- Հանվեյ Ջ., 6, 7, 10, 15, 16, 33, 36
- Հովսեփ կայսր, 6
- Ղուլամ Հուսեին, 13
- Մահմադ Ալի խան, 56
- Մահմեդ բեկ, 14, 15, 36, 37, 49
- Մահմուդ սուլթան, 39
- Մաղալյան Ա., 3, 4, 18
- Մարգար, 7
- Միրզա Ահմեդ, 45
- Միրզա Ջաֆի, 52, 54, 55
- Միհայել Ասորի, 7

Մունամմադ Քյազիմ, 29
Մունամմեդ շահ, 13, 14, 25, 31
Մուլիբ Ալի բեկ, 56

Յարութին Դավթեան Ջուլա-
լեցի, 5, 6, 7, 8, 9, 10, 19
Յուսուֆ Ալի խան Ջալաիրի,
50

Նադիր Միրզա, 50
Նադիր շահ, 5, 6, 8, 9, 10,
11, 12, 13, 14, 15, 16, 17, 19,
21, 22, 23, 24, 25, 26, 27, 28,
29, 30, 31, 32, 33, 34, 35, 36,
37, 38, 39, 40, 41, 42, 43, 44,
45, 46, 47, 48, 49, 50, 52, 53,
54, 55, 56, 57

Նասերոլլան Միրզա, 17, 50
Նասր խան, 28

Շահ Սուլթան Հուսեյն, 26, 52
Շահամիրյան Հ., 6
Շահռուխ Միրզա, 50, 51

Պետրոս դի Սարգիս Գիլանէնց,
5
Պիոս Վեցերորդ, 6, 9

Պողոս Միրզայան Ամիրբեցի,
6, 7

Ջահան շահ, 13, 25, 28

Ռգա-Ղուլի Միրզա, 5, 13, 14,
15, 17, 19, 23, 24, 26, 27,
28, 30, 31, 32, 33, 34, 36,
37, 38, 43, 44, 45, 48, 49,
50, 51, 52, 53, 54, 56, 57,
58

Սալեհ բեկ, 16
Սեյիդ Մունամմադ (Միր Սեյիդ
Միրզա), 50
Սեֆի-եղ-Դին շեյխ, 26
Սեֆյաններ, 10, 26, 50
Սէիտ Նիազ խան, 33
Ստեփան դի Մանդէնով, 6
Սոլթանաղա, 7

Քէրիմ բեկ, 33
Քիշմիշև Ա., 57
Քյուչում Արութին, 24

Ֆարսիմա Սուլթան Բեգում, 26

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ասպահան, 41, 44
Աստրախան, 7, 9, 10
Ավստրիա, 6
Ատրպատական, 24
Արևելյան Հայաստան, 24
Աֆղանստան, 12, 23, 50

Իրան, 10, 11, 12, 13, 14, 16,
17, 22, 23, 24, 26, 27, 31, 35,
41, 51, 57

Լահոր, 28

Խիվա, 38, 39
Խորասան, 16, 24, 27, 38, 39,
50

Կակաբա, 6
Կառնալ, 13, 31
Կասպից ծով, 40, 46

Հայաստան, 18
Հերաթ, 34, 35, 37, 48
Հնդկաստան, 12, 13, 23, 24,
25, 31, 32, 33, 35, 38, 39, 46

Ղանդահար, 12, 23

Մադրաս, 6
Մազանդարան, 40
Մեշհեդ, 17, 24, 27, 30, 38, 50

Նաջաֆ, 41

Բալխ, 39
Բաղդադ, 39, 52
Բաշբուլամ գետ, 51
Բաշու գյուղ, 51
Բուխարա, 15, 38, 39, 46

Գիլան, 40

Դաղստան, 15, 39, 41, 45, 46
Դելի, 13, 25, 28, 31, 32, 33, 35
Դերբենդ, 11, 15, 46, 51

Եվրոպա, 10, 11

Թաթարաց երկիր, 39
Թավրիզ, 24
Թեհրան, 30, 32, 33, 40, 44,
45, 49, 50
Թուրքիա, 39

Շահյանաբաղ (Ջհանաբաղ),
28, 31, 32, տե՛ս նաև Դելի

Պարսկաստան, 1, 5, 11, 17,
19, 22, 25, 27, 31, 32, 33, 34,
36, 37, 38, 39, 45, տե՛ս նաև
Իրան

Ջալալաբաղ, 23, 35
Ջհանաբաղ – տե՛ս Շահյանա-
բաղ

Ռուսաստան, 5, 12, 40, 41

Ս. Պետերբուրգ, 5, 9, 10, 41
Սաբզիվար, 23, 26, 27

Փենջաբ, 25
Փեշավար, 28, 29

Քարուլ, 25
Քելաթ, 17

Օսմանյան կայսրություն, 33,
39

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ..... 5

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏՏԻՇՉԵՒ

Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ
եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի
պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ 1742..... 19

ՑԱՆԿԵՐ

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ... 61
Անձնանունների ցանկ..... 65
Տեղանունների ցանկ..... 67

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇՉԵՒ

Բացատրություն
անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ
եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին
տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից
յամս 1741 եւ 1742

Աշխատասիրությամբ
ԱՐՏԱԿ ՍԱՂԱԼՅԱՆԻ

Համակարգչային շարվածքը՝ Թ. Թերջյանի

Հրատ. պատվեր N 241

Ստորագրված է տպագրության 20. 07. 2009 թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ N 1:

5,5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

**ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ**
հրատարակչություն



Թումանյան 12, 3,
(3749) 52 08 48
56 08 41
info@editprint.am